

Շտապօգնություն սովորության միջազգային մարդասիրական իրավունքի վերաբերյալ. Ներդրում իրավունքի նորմերը հասկանալու և գինված ընդհարման ժամանակ պահպանելու համար

Ժան-Մարի Շենկերց*

Ժան-Մարի Շենկերցը Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) իրավաբանական բաժնի իրավախորհրդականն է: Նա գլխավորում է սովորության միջազգային մարդասիրական իրավունքի գծով ԿԽՄԿ-ի նախագիծը: Սովորության միջազգային մարդասիրական իրավունքին նվիրված երկհատորյակը՝ Ժան-Մարի Շենկերցի և Լուիզա Դոսվալդ-Բեկի խմբագրությամբ վերջերս լույս է ընծայել Cambridge University Press հրատարակչությունը

Համառոտ բովանդակություն

Հոդվածում շարադրված են պատճառները, ըստ որոնց ԿԽՄԿ-ն՝ Կարմիր խաչի միջազգային կոնֆերանսի խնդրանքով, ձեռնարկել է սովորության

* Հեղինակը շնորհակալ է Էրիկ Մոնժլային սույն հոդվածը նախապատրաստելու գործում ցուցաբերած օգնության, ինչպես նաև Լուիզա Դոսվալդ-Բեկին և իրավաբանական բաժնի գործընկերներին մի ամբողջ շարք օգտակար դիտողությունների համար: Հոդվածում արտահայտված կարծիքներն արտացոլում են հեղինակի տեսակետը և պարտադիր չէ, որ համընկնեն ԿԽՄԿ-ի դիրքորոշմանը:

միջազգային մարդասիրական իրավունքին նվիրված հետազոտությունը: Հեղինակները նկարագրում են հետազոտության մեթոդաբանությունը, կառուցվածքը, ներկայացնում են հիմնական եզրահանգումները՝ նպատակ չունենալով ամբողջությամբ բացահայտել և վերլուծել վերջիններս:

Ներածություն

1949 թվականի Ժնևի կոնվենյանների ընդունման պահից անցած 50 տարիների ընթացքում գրեթե բոլոր մայրցամաքները դարձել են ընդհարումների ասպարեզ և վերջիններիս բազմաքանակությունը մտահոգիչ է: Այդ ժամանակահատվածի ընթացքում Ժնևի չորս կոնվենյանները և դրանց կից 1977 թվականի Լրացուցիչ արձանագրություններն իրավական պաշտպանություն էին տրամադրում այն անձանց, ովքեր չեն մասնակցել կամ դադարեցրել են իրենց մասնակցությունն անմիջական ռազմական գործողություններին (վիրավորներին, հիվանդներին, նավաբեկության ենթարկվածներին, ռազմական ընդհարման հետ կապված պատճառներով ազատագրված ենթարկված անձանց և քաղաքացիական անձանց): Չնայած դրան, տեղի են ունեցել վերոնշյալ պայմանագրերի բազմաթիվ խախտումներ, որոնց արդյունքում գոհվում և տառապում էին մարդիկ: Այդ ամենից հնարավոր կլիներ խուսափել, եթե միջազգային մարդասիրական իրավունքն ավելի լավ պահպանվեր:

Համընդհանուր կարծիքով, միջազգային մարդասիրական իրավունքի խախտումները կատարվում են ոչ այն պատճառով, որ թերի են դրա նորմերը, այլ, ավելի շուտ, դրանք կիրառելու ցանկության բացակայության, իրավակիրառ մեխանիզմի անկատարության, ինչպես նաև այն պատճառով, որ որոշ իրավիճակներում լիովին պարզ չէ, թե ինչպես դրանք պետք է կիրառվեն, և վերջապես, քաղաքական առաջնորդների, հրամանատարների, պատերազմող պետությունների զինված ուժերի կազմում ընդգրկված և ռազմական գործողություններին անմիջականորեն մասնակցող անձանց և ընդհանրապես բնակչության կողմից այդ նորմերին տեղյակ չլինելու հետևանքով:

1993 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Ժնևում կայացած պատերազմի գոհերի պաշտպանությանը նվիրված Միջազգային կոնֆերանսում քննարկվեցին միջազգային մարդասիրական իրավունքի խախտումների դեմ պայքարի տարբեր մեթոդներ: Այդտեղ հանձնարարականներ չորվեցին պայմանագրային նոր դրույթների մշակման վերաբերյալ, սակայն, դրա փոխարեն, միաձայն ընդունված եզրափակիչ հռչակագրում կոնֆերանսի մասնակիցները հաստատեցին «միջազգային մարդասիրական իրավունքի դրույթների առավել արդյունավետ կատարման անհրաժեշտությունը» և Շվեյցարիայի կառավարությանը կոչ արեցին գումարել փորձագետների չսահմանափակված կազմով միջկառավարական խումբ, որը կուսումնասիրի նշված իրավունքի առավել լիակատար հարգմանն ու պահպանմանը նպատակաուղղված գործնական միջոցները, ինչպես նաև կնախապատրաստի զեկույց Կարմիր խաչի և

կարմիր մահիկի միջազգային կոնֆերանսի հաջորդ նստաշրջանի մասնակից պետություններին ներկայացնելու համար:¹

Պատերազմի գոհերի պաշտպանության փորձագետների միջկառավարական խմբի հանդիպման ժամանակ, որը կայացավ 1995թ. հունվարին Ժնևում, ընդունվեցին մի շարք հանձնարարականներ, որոնց նպատակն էր բարձրացնել հարգանքը միջազգային մարդասիրական իրավունքի նկատմամբ, այդ թվում նաև՝ այնպիսի կանխարգելիչ միջոցների ընդունմամբ, որոնք կապահովեին Միջազգային մարդասիրական իրավունքի ավելի լիակատար իմացությունը և առավել արդյունավետ կիրառումը: Թիվ II Հանձնարարականում Միջկառավարական խմբի փորձագետները խորհուրդ են տալիս, որպեսզի.

ԿԽՄԿ-ին առաջարկվի՝ Միջազգային մարդասիրական իրավունքի տարբեր տարածաշրջաններ և տարբեր իրավակարգեր ներկայացնող մասնագետների աջակցությամբ, ինչպես նաև կառավարությունների և միջազգային կազմակերպությունների կողմից նշանակված խորհրդատուների մասնակցությամբ նախապատրաստել զեկույց Միջազգային մարդասիրական իրավունքի սովորութային այն նորմերի վերաբերյալ, որոնք կիրառելի են միջազգային և ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումներում և այդ զեկույցը տարածել պետությունների և իրավասու միջազգային կազմակերպությունների շրջանում:²

Կարմիր խաչի և կարմիր մահիկի XXVI Միջազգային կոնֆերանսը 1995 թվականի դեկտեմբերին պաշտպանեց այդ հանձնարարականը և ԿԽՄԿ-ին պաշտոնապես հանձնարարեց նախապատրաստել զեկույց մարդասիրական իրավունքի սովորութային այն նորմերի վերաբերյալ, որոնք կիրառելի են միջազգային և ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումների ժամանակ:³ Եվ ահա, գրեթե 10 տարի անց, 2005 թվականին, խորացված հետազոտություններից և լայնածավալ խորհրդատվություններից հետո, այդ զեկույցը հրապարակվեց սովորութային միջազգային մարդասիրական իրավունքի վերաբերյալ հետազոտության տեսքով:⁴

Նպատակը

Սովորութային միջազգային մարդասիրական իրավունքի վերաբերյալ հետազոտությունը նպատակ ունի վերացնել պայմանագրային միջազգային

1 Պատերազմի գոհերի պաշտպանության միջազգային կոնֆերանս: Ժնև: 1993 թվականի օգոստոսի 30 - սեպտեմբերի 1: Եզրափակիչ հռչակագիր: International Review of the Red Cross, No 296, 1993, p. 381:

2 Պատերազմի գոհերի պաշտպանության փորձագետների միջազգային խմբի հանդիպում, Ժնև, 1995 թ. հունվարի 23-27, Հանձնարարական II, International Review of the Red Cross, No 310, 1996, p. 84:

3 Կարմիր խաչի և կարմիր մահիկի XXVI միջազգային կոնֆերանս, Ժնև, 1995 թ. դեկտեմբերի 3-7, Բանաձև թիվ 1. Միջազգային մարդասիրական իրավունք. իրավունքից՝ գործողություն: Պատերազմի գոհերի պաշտպանության միջազգային կոնֆերանսի որոշումների կատարման ուղղությամբ ծավալված գործունեության մասին հաշվետվություն: International Review of the Red Cross, No 310, 1996, p. 58:

4 Jean-Marie Henckaerts and Louise Doswald-Beck, Customary International Humanitarian Law, 2 volumes, Volume I. Rules, Volume II. Practice (2 Parts), Cambridge University Press, 2005.

մարդասիրական իրավունքի կիրառմանն առնչվող մի շարք հիմնախնդիրներ: Պայմանագրային իրավունքը լավ է զարգացած և ընդգրկում է պատերազմի վարման բազմաթիվ ասպեկտներ՝ պաշտպանություն տրամադրելով անձանց մի շարք կատեգորիաների և սահմանափակելով ռազմական գործողությունների վարման թույլատրելի միջոցներն ու մեթոդները: Ժնևի կոնվենցիաները և դրանց կից Լրացուցիչ արձանագրությունները բովանդակում են պատերազմին չմասնակցող կամ ռազմական գործողություններին իրենց անմիջական մասնակցությունը դադարեցրած անձանց պաշտպանության մանրամասնորեն շարադրված պայմանակարգը: Ռազմական գործողությունների վարման միջոցների և մեթոդների այդ կանոնակարգումը սկիզբ է առել 1868 թվականի Սանկտ Պետերբուրգի հռչակագրում, 1899 և 1907 թվականների Հաագայի կանոնակարգերում և 1925 թվականի Ժնևի արձանագրությունում, որ վերաբերում է պատերազմում գազերի կիրառման արգելքին, իսկ ոչ հեռավոր անցյալում զարգացվել է Կենսաբանական զենքի մասին 1972 թվականի կոնվենցիայում, 1977 թվականի Լրացուցիչ արձանագրություններում, Որոշակի տեսակի սովորական զենքերի մասին 1980 թվականի կոնվենցիայում և դրան կից հինգ արձանագրություններում, Քիմիական զենքի մասին 1993 թվականի կոնվենցիայում, Հակահետևակային ականների օգտագործումն արգելելու մասին 1997 թվականի Օտտավայի կոնվենցիայում: Չինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանությունը հանգամանորեն կանոնակարգված է 1954 թ. Հաագայի կոնվենցիայով և դրան կից երկու արձանագրություններով: 1998 թվականին ընդունված Միջազգային քրեական դատարանի ստատուտը, այդ ամենից բացի, բովանդակում է նաև Միջազգային քրեական դատարանի իրավագործությանը ենթակա պատերազմական հանցագործությունների ցանկը:

Սակայն, առկա է երկու գործոն, որ լրջորեն խոչընդոտում են արդի զինված ընդհարումներում այդ պայմանագրերի կիրառմանը: Հենց այդ հանգամանքն է, որ օգտակար և, նույնիսկ, անհրաժեշտ է դարձնում սովորության միջազգային մարդասիրական իրավունքին վերաբերող հետազոտությունը: Առաջին, պայմանագրերը միմյանց հետ կապում են միայն դրանք վավերացրած պետություններին: Դա նշանակում է, որ միջազգային մարդասիրական իրավունքին վերաբերող տարբեր պայմանագրերը կիրառվում կամ չեն կիրառվում կոնկրետ զինված ընդհարումներում՝ կախված նրանից, թե որ պայմանագրերն են վավերացրել այդ ընդհարումների մեջ ներքաշված պետությունները: 1949 թվականի Ժնևի չորս կոնվենցիաները վավերացվել են աշխարհի գրեթե բոլոր պետությունների կողմից, բայց նույնը չի կարելի ասել միջազգային մարդասիրական իրավունքին վերաբերող մնացած պայմանագրերի մասին: Նույնիսկ ավելի քան 160 պետությունների կողմից վավերացրած I Լրացուցիչ արձանագրության արդյունավետությունը ներկա դրությամբ նվազել է այն պատճառով, որ միջազգային զինված ընդհարումների մեջ ներքաշված ոչ բոլոր պետություններն են հանդիսանում դրա մասնակիցները: Նմանապես, ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումների մեջ ներքաշված ոչ բոլոր պետություններն են

ընդգրկված շուրջ 160 այն պետությունների շարքում, որոնք վավերացրել են II Լրացուցիչ արձանագրությունը: Ոչ միջազգային բնույթի այդ զինված ընդհարումներում 3-րդ հոդվածը, որն ընդհանուր է Ժնևի բոլոր չորս կոնվենցիաների համար, հաճախ հանդիսանում է պայմանագրային մարդասիրական իրավունքի միակ կիրառելի դրույթը: Այդպիսով, հետազոտության նպատակն առաջին հերթին այն է, որպեսզի որոշվի, թե միջազգային մարդասիրական իրավունքի որ նորմերն են դարձել սովորութային միջազգային իրավունքի բաղկացուցիչ մասը և դրա հետևանքով փոխկապակցում են ընդհարման բոլոր կողմերին անկախ նրանից, վավերացրե՞լ են, արդյոք, թե՛ ոչ, նրանք այն պայմանագրերը, որոնք բովանդակում են այդ կամ նմանատիպ դրույթներ:

Երկրորդ, մարդասիրական պայմանագրային իրավունքն անհրաժեշտ մանրամասնությամբ չի կանոնակարգում մեր օրերում տեղի ունեցող զինված ընդհարումների զգալի մասը՝ այսինքն՝ ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումները, որոնց նկատմամբ կիրառելի են զգալի թվով, սակավ պայմանագրային նորմեր, քան միջազգային ընդհարումների նկատմամբ: Ոչ միջազգային զինված բնույթի ընդհարումների վրա տարածվում է սուկ սահմանափակ քանակությամբ պայմանագրերի ներգործությունը, այն է՝ Որոշակի տեսակի սովորական զենքերի մասին կոնվենցիան՝ իր ուղղումներով, Միջազգային քրեական դատարանի ստատուտը, Հակահետևակային ականների օգտագործումն արգելելու մասին Օտտավայի կոնվենցիան, Քիմիական զենքի մասին կոնվենցիան, Ջինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին Հաագայի կոնվենցիան և դրան կից Երկրորդ արձանագրությունը, ինչպես նաև, վերոնշյալ II Լրացուցիչ արձանագրությունը և 3-րդ հոդվածը, որն ընդհանուր է Ժնևի բոլոր չորս կոնվենցիաների համար: 3-րդ ընդհանուր հոդվածը, իհարկե, հիմնարար նշանակություն ունի, սակայն սահմանում է սուկ ամենամիավագային ստանդարտներ: II Լրացուցիչ արձանագրությունն օգտակար լրացում է 3-րդ ընդհանուր հոդվածի համար, սակայն նա մանրամասնելու առումով զիջում է Ժնևի կոնվենցիաների և I Լրացուցիչ արձանագրության նորմերին, որոնք կանոնակարգում են միջազգային զինված ընդհարումները:

II Լրացուցիչ արձանագրությունը բովանդակում է ընդամենը 15 հոդված, որոնք վերաբերում են հարցի էությանը, այլ ոչ թե ձևին, այն դեպքում, երբ I Լրացուցիչ արձանագրությունում դրանք 80-ից ավելի են: Իհարկե, հարցը միայն քանակության մեջ չէ, բայց և քանակական գործոնները բավականաչափ ցայտուն են ցույց տալիս միջազգային և ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումների պայմանագրային իրավական կանոնակարգման տարբերությունը, հատկապես նրանում, ինչը վերաբերում է հանգամանորեն ներկայացված նորմերին և մանրամասն բնորոշումներին: Այնպես որ, հետազոտության երկրորդ նպատակն էր որոշել, թե արդյո՞ք, միջազգային սովորութային իրավունքն ավելի մանրամասն է կարգավորում ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումները, քան դա անում է պայմանագրային իրավունքը և, եթե այո, ապա որքանո՞վ:

Մեթոդաբանությունը

Միջազգային դատարանի Կանոնադրությունում միջազգային սովորության իրավունքը սահմանվում է որպես «համընդհանուր պրակտիկա, որը ճանաչվում է որպես իրավական նորմ»⁵: Որպեսզի որևէ նորմ դառնա միջազգային սովորությ, պահանջվում է, ինչպես դա լայնորեն ճանաչվում է, երկու տարր, այն է՝ պետական պրակտիկա (usus) և համոզվածություն, որ տվյալ պրակտիկան պարտադիր է. արգելված է կամ թույլատրված՝ պայմանավորված նորմի բնույթով, օբյեկտիվ իրավունքի տեսանկյունից (այսինքն, հանդիսանում է opinio juris sive necessitatis - իրավաբանորեն պարտադիր նորմ):

Մայրցամաքային ելուստի մասին գործով Միջազգային դատարանը հայտարարեց «աքսիոմ է այն, որ սովորության տարրերը միջազգային իրավունքում պետք է որոնել, նախ և առաջ, պրակտիկայում և պետությունների opinio juris-ում»⁶: Այդ տարրերի ճշգրիտ նշանակությունը և բովանդակությունը գիտական շրջանակներում դարձան լայնածավալ բանավեճերի առարկա: Սույն հետազոտությունում ընդհանուր սովորության միջազգային իրավունքի այս կամ նորմի առկայության հարցը լուծվում էր Միջազգային դատարանի կողմից մշակված դասական մոտեցման հիման վրա: Նման մոտեցման արտացոլումն էր, մասնավորապես, Հյուսիսային ծովի մայրցամաքային ելուստի մասին գործը⁷:

Պետական պրակտիկան

Պետական պրակտիկայի հետ կապված երկու հարց է առաջանում. առաջինը՝ ո՞ր պրակտիկան է նպաստում միջազգային սովորության իրավունքի ձևավորմանը (պետական պրակտիկայի ընտրություն) և երկրորդը, սահմանում է, արդյոք, այդ պրակտիկան միջազգային սովորության իրավունքի նորմ (պետական պրակտիկայի գնահատում):

Պետական պրակտիկայի ընտրությունը

Պետությունների ինչպես ֆիզիկական, այնպես էլ բանավոր ակտերը ձևավորում են միջազգային սովորության իրավունքի ստեղծմանը նպաստող պրակտիկա: Ֆիզիկական ակտերը ներառում են, օրինակ, վարվելակերպը մարտադաշտում, զենքի որոշակի տեսակների կիրառումը և տարբեր կատեգորիաների անձանց հետ շփումը: Բանավոր ակտերը ներառում են ռազմական կարգադրությունները, ներքին օրենսդրությունը, ազգային նախադեպային իրավունքը, զինված ուժերին և անվտանգության ուժերին հասցեագրված հրա-

5 Միջազգային դատարանի ստատուտ, հոդված 38 (1) (b):

6 International Court of Justice, Continental Shelf case (Libyan Arab Jamahiriya v. Malta), Judgment, 3 June 1985, ICJ Reports 1985, pp. 29-30, § 27.

7 International Court of Justice. North Sea Continental Shelf cases, Judgment, 20 February 1969, ICJ Reports 1969, p. 3.

հանգները, զինված ընդհարումների ընթացքում ռազմական կոմյունիկները, դիվանագիտական հայտարարությունները, պետական իրավախորհրդատուների եզրակացությունները, պայմանագրերի նախագծերի վերաբերյալ կառավարության մեկնաբանությունները, գործադիր իշխանության որոշումները և հրապարակած կանոնները, ելույթները միջազգային դատարաններում և միջազգային ներկայացուցչական ժողովներում, կառավարության դիրքորոշումը միջազգային կազմակերպությունների բանաձևերի վերաբերյալ: Սույն ցանկը վկայում է, որ պետության գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունների մարմինների պրակտիկական կարող է նպաստել միջազգային սովորութային իրավունքի ձևավորմանը:

Միջազգային կազմակերպությունների կամ կոնֆերանսների կողմից բանաձևերի մշակումը և ընդունումը, ինչպես նաև քվեարկության դրդապատճառների շարադրանքը նույնպես հանդիսանում են համապատասխան պետությունների ակտեր: Ընդունված է, որ չնչին բացառությամբ, բանաձևերն ինքնին ենթակա չեն պարտադիր կատարման և այդ պատճառով, սովորութային մարդասիրական իրավունքի նորմի ձևավորման գործում այս կամ այն կոնկրետ բանաձևի դերի գնահատումը պայմանավորված է նրա բովանդակությամբ, այն հանգամանքով, թե որքանով է այն ընկալվում որպես ընդունելի, թե որքանով է հետևողական համապատասխան պետական պրակտիկան⁸: Որքան մեծ է որևէ բանաձևի վայելած աջակցությունը, այնքան ավելի մեծ կլինի նրա նշանակությունը:

Թեև միջազգային դատարանների որոշումները հանդես են գալիս որպես միջազգային իրավունքի օժանդակ աղբյուրներ⁹, այդուհանդերձ դրանք չեն ներառվում պետությունների պրակտիկայում, քանի որ, ի տարբերություն ազգային դատարանների, միջազգային դատական ատյանները պետական մարմիններ չեն: Այնուամենայնիվ, միջազգային դատարանների որոշումները կարևոր են, քանի որ նրանցից մեկի եզրակացությունն առ այն, որ միջազգային սովորութային իրավունքի նորմը գոյություն ունի, ծանրակշիռ փաստարկ է այդ նորմի նման ըմբռնման օգտին: Բացի դրանից, շնորհիվ նրա, որ միջազգային դատարանների որոշումները նախադեպ են ստեղծում, այդ դատարանները կարող են նպաստել նաև սովորութային միջազգային իրավունքի նորմերի ձևավորմանը, ներազդելով պետությունների և միջազգային կազմակերպությունների հետագա պրակտիկայի վրա:

Չինված ընդդիմադիր խմբերի պրակտիկան, օրինակ՝ վարվելակերպի կանոնները, միջազգային մարդասիրական իրավունքի որոշակի նորմեր պահպանելու պարտավորությունները և այլևայլ հայտարարությունները, որպես այդպիսիք պետական պրակտիկա չեն հանդիսանում: Իհարկե, նման պրակ-

8 Այդ պայմանների նշանակությունն ընդգծվել է Միջազգային դատարանի կողմից՝ Միջուկային զենքով սպառնալու կամ այն կիրառելու օրինականության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունում, 8 July 1996, ICJ Reports 1966, pp. 254-255, §§ 70-73:
9 Միջազգային դատարանի ստատուտ, հոդված 38 (1) (d):

տիկան կարող է ծառայել ոչ միջազգային բնույթի ընդհարումներում համապատասխան նորմերի ճանաչման ասպարեզ, սակայն դրա իրավական նշանակալիությունը պարզ չէ և այդ պատճառով համապատասխան վկայակոչումները չեն կարող դիտվել որպես սովորության միջազգային իրավունքի գոյության ասպարեզ: Նման պրակտիկայի օրինակներ բերված են սույն հետազոտության երկրորդ հատորում՝ «Այլ պրակտիկա» վերտառությամբ:

Պետական պրակտիկայի գնահատումը

Պետական պրակտիկան հարկ է կշռադատել, որոշելու համար, թե արդյոք նա ունի բավարար «խտության» ներուժ՝ սովորության միջազգային իրավունքի նորմ ստեղծելու համար¹⁰: Սովորության միջազգային իրավունքի նորմ սահմանելու համար պետական պրակտիկան պետք է լինի գրեթե միօրինակ, լայնածավալ և ցուցադրաներկայացուցչական¹¹: Ավելի հանգամանորեն անդրադառնանք դրա նշանակությանը:

Առաջինը, սովորության միջազգային իրավունքի նորմ ստեղծելու համար պետական պրակտիկան պետք է լինի գրեթե միատեսակ: Ռա նշանակում է, որ, ըստ էության, պետությունները չպետք է գործեն տարանջատ: Միջազգային դատարանի գործունեությունը վկայում է, որ նման պրակտիկային հակասող գործողությունները, որոնք, կարծես թե, խախտում են դրա միօրինակությունը, իրականում չեն խոչընդոտում սովորության միջազգային իրավունքի նորմի ձևավորմանը, քանի որ նշված պրակտիկային հակասող գործողությունները, դատապարտվում են այլ պետությունների կողմից, իսկ համապատասխան երկրի կառավարությունը ժխտում է այն: Արդյունքում ստացվում է, որ դատապարտման և ժխտման միջոցով տվյալ նորմը միայն հաստատվում է¹²:

Առաջին հերթին դա վերաբերում է միջազգային մարդասիրական իրավունքի այն նորմերին, որոնց ակտիվ սատարումը, անկասկած, հաստատվում է պետությունների պրակտիկայով, սակայն կան նաև այդ նորմերի խախտման բազմաթիվ օրինակներ: Եթե խախտումներ կատարած կողմը վկայակոչում է իր գործողություններն արդարացնող այլևայլ հանգամանքներ, իսկ այլ պետություններ դատապարտում են այդ գործողությունները, դա ոչ մի կերպ կասկածի տակ չի դնում համապատասխան նորմի գոյությունը: Այն պետությունները, որոնք ցանկանում են փոխել սովորության մարդասիրական իրավունքի գոյություն ունեցող նորմը, այդ գործողությունը պետք է կատարեն իրենց պաշտոնական պրակտիկայի միջոցով՝ հայտարարելով, որ գործում են իրավունքի համաձայն:

10 «Խտություն» ձևակերպումը մենք փոխառել ենք Sir Humphrey Waldock, “General Course on Public International Law”, Collected Courses of the Hague Academy of International Law, Vol. 106, 1962, p. 44:

11 International Court of Justice, North Sea Continental Shelf cases, op. cit. (note 7), p. 43, § 74.

12 *Stu* International Court of Justice, Case concerning Military and Paramilitary Activities in and against Nicaragua v. United States), Merits, Judgment, 27 June 1986, ICJ Reports 1986, p. 98, § 186:

Երկրորդ, որպեսզի սովորութային մարդասիրական իրավունքի նորմը համարվի գոյություն ունեցող, պահանջվում է, որ համապատասխան պետական պրակտիկան լինի լայնածավալ և ներկայացուցչական: Պարտադիր չէ, որ այն լինի ունիվերսալ, բավարար է, որ այն լինի տարածված¹³: Կոնկրետ պահանջներ չկան նաև տվյալ պրակտիկան իրականացնող պետությունների թվի և մասնաբաժնի վերաբերյալ: Մասնակցության անհրաժեշտ աստիճանի ճշգրիտ հաշվարկն անհնար է իրականացնել այն պարզ պատճառով, որ չափորոշիչը որոշակի իմաստով կրում է, ավելի շուտ, որակական, այլ ոչ թե քանակական բնույթ: Այլ կերպ ասած, հարցը ոչ միայն այն է, թե քանի պետություններ են մասնակցում պրակտիկային, այլև՝ որոնք են այդ պետությունները¹⁴: Հյուսիսային ծովի մայրցամաքային ելուստի գործով Միջազգային դատարանի որոշման մեջ ասվում է, որ համապատասխան պրակտիկան «պետք է ընդգրկի այն պետությունները, որոնց շահերը շոշափվում են անմիջականորեն»¹⁵:

Այդ ելակետային նախադրյալից բխում է երկու եզրահանգում. (1) եթե ներկայացված են բոլոր այն պետությունները, «որոնց շահերը շոշափված են առանձնակի», ապա այլ պետությունների մեծ մասի ակտիվ մասնակցությունը չի պահանջվում. բավարար կլինի, որ վերջիններս, նվազագույնը, համաձայն լինեն «առանձնակի շոշափված» պետությունների պրակտիկայի հետ, (2) եթե «առանձնակի շոշափված» պետությունները չեն ընդունում պրակտիկան, ապա դրանից երբեք չի հասունանա սովորութային միջազգային իրավունքի նորմ, նույնիսկ այն դեպքում, երբ միաձայն հավանություն չի պահանջվում, ինչպես պարզաբանվեց վերը¹⁶: Այն հարցի պատասխանը, թե ո՞ր պետությունը կհամարվի «առանձնակի շոշափված» միջազգային մարդասիրական իրավունքի լուսի ներքո, հանգամանքներով պայմանավորված կլինի տարբեր: Օրինակ, ինչ վերաբերում է կուրացնող լազերային զենքի կիրառմանը, ապա այնտեղ «առանձնակի շոշափվող պետություններ» կհամարվեն նման զենքի բացահայտված մշակողները, ինչպես նաև այն պետությունները, որոնք հավանականորեն կարող են տուժել դրա կիրառումից: Նմանապես, «առանձնակի շոշափվող» պետություններ կհամարվեն նրանք, որոնց բնակչությունը կարիք ունի մարդասիրական օգնության, ինչպես և այն պետությունները, որոնք հաճախ տրամադրում են նման օգնություն: Միջազգային մարդասիրական իրավունքի ցանկացած նորմի մասին կարելի է ասել, որ զինված ընդհարմանը մասնակցած երկրները կընդգրկվեն «առանձնակի շոշափվողների» կատեգորիայում, եթե նրանց պրակտիկան այս կամ այն նորմի առնչությամբ կապված է զինված ընդհարման հետ: Թեև միջազգային մարդասիրական որոշ ոլորտներում էլ կա-

13 International Law Association, Final Report of the Committee on the Formation of Customary (General) International Law, Statement of Principles Applicable to the Formation of General Customary International Law, Report of the Sixty-Ninth Conference, London, 2000, Principle 14, p. 734 (այսուհետ՝ “ILA Report”):

14 Ibid., commentary (d) and (e) to Principle 14, pp. 736-737:

15 International Court of Justice, North Sea Continental Shelf cases, op. cit (note 7), p. 43, § 74:

16 ILA Report, op cit. (note 13), commentary (e) to Principle 14, p. 737:

րող են լինել «առանձնակի շոշափվող» պետություններ, կարելի է համոզվածությամբ ասել, որ բոլոր պետություններն իրավաբանորեն շահագրգռված են պահանջելու, որպեսզի բոլոր պետությունները պահպանեն միջազգային մարդասիրական իրավունքը, նույնիսկ եթե նրանք ընդհարման կողմ չեն¹⁷: Բացի դրանից, բոլոր պետությունները կարող են տուժել պատերազմի վարման այն միջոցներից և մեթոդներից, որ կիրառում են այլ պետությունները: Հետևաբար, քննության պետք է առնել բոլոր պետությունների պրակտիկան, անկախ նրանից, հանդիսանում են նրանք խիստ իմաստով «առանձնակի շոշափվող», թե՛ ոչ:

Հետազոտությունում քննության չի առնվում այն հարցը, թե առկա^o է, արդյոք, իրավաբանական հնարավորություն շարունակաբար առարկություններ ներկայացնել միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի դեմ: Շատ հեղինակներ գտնում են, որ չի կարելի շարունակաբար առարկել jus cogens նորմերի դեմ, իսկ այլոք կասկածներ են հայտնում շարունակական առարկությունների բուն հայեցակարգի հրատապության հանդեպ¹⁸: Եթե ընդունենք, որ առկա է առարկությունների առաջադրման շարունակական իրավաբանական հնարավորություն, ապա նման դիրքորոշում ունեցող պետությունը պետք է շարունակաբար առարկություններ առաջադրի, քանի դեռ համապատասխան նորմը գտնվում է ձևավորման գործընթացում և հետևի այդ նույն գծին նաև հետագայում, իսկ ահա նորմի ամրագրումից հետո նման դիրքորոշումը մերժելի է¹⁹:

Սովորության միջազգային իրավունքի նորմի ձևավորման համար, բնականաբար, ժամանակ է պահանջվում, սակայն ճշգրիտ որոշել դրա համար պահանջվող ժամանակի տևողությունը հնարավոր չէ: Թերևս, որոշիչ գործոնն այստեղ կլինի բավարար «խտության» պրակտիկայի կուտակումը՝ միատեսակության, լայնածավալության և ցուցադրաներկայացուցչականության իմաստով²⁰:

Opinio juris

Սովորության միջազգային իրավունքի նորմի գոյությունը որոշելու համար opinio juris-ի պահանջն իրավաբանական տեսանկյունից հարաբերակցվում է այն համոզվածությանը, որ համապատասխան կոնկրետ պրակտիկան իրականացվում է «իրավունքի» համաձայն: Այն ձևը, որը ընդունում է բուն պրակտիկան և դրա օրինաչափության հանդեպ համոզվածությունը, կարող են տարափոխվել՝ կախված է նրանից, թե բովանդակում է, արդյոք, համա-

17 St' u Customary International Humanitarian Law, op. cit. (note 4), Vol. I, commentary to Rule 144

18 Տվյալ հարցի խորացված քննարկումը տե՛ս Maurice H. Mendelson, "The Formation of Customary International Law", Collected Courses of the Hague Academy of International Law, vol. 272, 1998, pp. 227-244:

19 ILA Report, op. cit (note 13), commentary (b) to Principle 15, p. 738:

20 Ibid., commentary (b) to Principle 12, p. 731:

պատասխան նորմն արգելք, որոշակիորեն գործելու պարտականություն կամ իրավունք:

Հետազոտության վրա կատարված աշխատանքը ցույց տվեց, թե որքան դժվար է տարանջատել պրակտիկայի և դրա օրինաչափության մեջ համոզվածության տարրերը. և բացահայտեց նման տարանջատման, մեծամասամբ, տեսական բնույթը: Հաճախ միևնույն գործողությունը հանդես է գալիս որպես և՛ պրակտիկայի, և՛ դրա օրինաչափության մեջ համոզվածության արտացոլում: Ինչպես նշեց Միջազգային իրավունքի ընկերակցությունը, Միջազգային դատարանը «հատակորեն չասաց, որ միայն այն պատճառով, որ (ինչպես համարվում է) սովորության իրավունքում գոյություն ունեն երկու տարրեր, երկուսն էլ չեն կարող դրսևորվել միևնույն գործողության մեջ: Հաճախ շատ դժվար է, կամ նույնիսկ անհնար է դրանք տարանջատել»²¹: Գա հատկապես ճշմարտացի է բանավոր ակտերի նկատմամբ, ինչպիսիք են, օրինակ, ռազմական կարգադրությունները, քանի որ վերջիններս ներառվում են պետական պրակտիկայում և հաճախ միաժամանակ արտացոլում են պետության համոզվածությունը դրա օրինաչափության վերաբերյալ:

Երբ առկա է բավականաչափ խիտ պրակտիկա, *opinio juris*-ը, որպես կանոն, ներառված է բուն պրակտիկայում և սովորաբար անհրաժեշտություն չի առաջանում առանձին ապացույեթ *opinio juris*-ի գոյությունը: Այն իրավիճակներում, երբ պրակտիկան միանշանակ չէ, *opinio juris*-ը կարևոր դեր է խաղում այն հարցի պատասխանը գտնելու գործում, թե մասնակցում է, արդյոք, տվյալ պրակտիկան սովորույթի ձևավորման գործընթացում: Հաճախ գործն աղպիսի ընթացք է ստանում, երբ պետությունները միջոցներ չեն ձեռնարկում կամ չեն արձագանքում այլևայլ հանգամանքների: Հենց այդ դեպքերում Միջազգային դատարանը և նրա նախորդը՝ Միջազգային արդարադատության մշտական պալատը, առանձին սահմանում էին *opinio juris*-ի գոյությունը, որպեսզի որոշեն, թե նպաստում են, արդյոք, ոչ միանշանակ պրակտիկայի առանձին օրինակները սովորության միջազգային իրավունքի ձևավորմանը²²:

Միջազգային մարդասիրական իրավունքի բնագավառում, որտեղ շատ նորմեր հրահանգում են ձեռնպահ մնալ որոշակի գործողություններից, միջոցների չձեռնարկումն առաջացնում է առանձնակի բարդ հիմնախնդիր, քանի որ պա-

21 Ibid., p. 718, § 10 (c): Հարցի խորացված վերլուծությունը տես Peter Haggemacher, “La doctrine des deux e’lements du droit coutumier la pratique de la Cour internationale”, *Revue ge’ne’rale de droit international public*. Vol. 90, 1986, p. 5:

22 Տես, օրինակ, Permanent Court of International Justice, *Lotus case (France v. Turkey)*, Judgment, 7 September 1927, PCIJ Ser. A, No 10, p. 28 (Գատարանը եկավ այն եզրակացության, որ պետությունները ձեռնպահ էին մնում նավերի վրա հակաօրինակական գործողություններ կատարած անձանց դատական պատասխանատվության ենթարկելուց, քանի որ համարում էին, որ դա իրենց արգելված է). *International Court of Justice, North Sea Continental Shelf cases*, op.cit (note 7), pp. 43-44, § § 76-77 (Գատարանը որոշեց, որ պետությունները չեն որոշել իրենց մայրցամաքային ելուստի սահմանները՝ հավասարաեռացվածության սկզբունքի հիման վրա, ձեռնպահ են մնացել դրանից, քանի որ համարել են, որ դա իրենց պարտականությունն է), *ILA Report*, op. cit (note 13), Principle 17 (iv) and commentary:

հանջվում է ապացույել, որ անգործունությունը պարզապես զուգադիպություն չի եղել, այլ հիմնվել է սթափ հաշվարկի վրա: Երբ որոշակի գործողությունների ձեռնարկի մնալու պահանջը ներառված է միջազգային պայմանագրերում և պաշտոնական հայտարարություններում, որպես կանոն, հնարավորություն է լինում ապացույել համապատասխան գործողությունների ձեռնարկի մնալու իրավունքի վերաբերյալ հրահանգի գոյությունը: Բայցի դրանից, միջոցներ չձեռնարկելու մնան դեպքերը կարող են տեղի ունենալ նրանից հետո, երբ համապատասխան գործողությունը ընկալվել է որպես վիճահարույց: Դա նույնպես օգնում է ցույց տալ, որ միջոցների չձեռնարկումը պատահական չի եղել: Ընդ որում, ոչ միշտ է հնարավոր դյուրությամբ ապացույել, որ անգործունությունը թելադրված է եղել իրավական պարտականության գիտակցմամբ:

Պայմանագրային իրավունքի ներգործությունը

Պայմանագրերը նույնպես օգնում են որոշել, թե գոյություն ունի, արդյոք, սովորության միջազգային իրավունքը: Դրանք ցույց են տալիս, թե ինչպես են պետությունները ընկալում միջազգային իրավունքի այս կամ այն նորմերը: Այդ պատճառով վավերացման, մեկնաբանման և իմպլեմենտացիայի հարցերը, այդ թվում՝ վերապահումները և ընկալման վերաբերյալ հայտարարությունները, իրենց արտացոլումն են գտել սույն հետազոտությունում: Հյուսիսային ծովի մայրցամաքային ելուստի վերաբերյալ գործերով որոշումներում Միջազգային դատարանն ամենայն որոշակիությամբ հայտարարեց, որ պայմանագրի վավերացման մակարդակը կարող է ծառայել որպես սովորության միջազգային իրավունքի գնահատման չափանիշ: «Այսօրվա դրությամբ վավերացումների և միացումների թիվը զգալի, բայց հազիվ թե՝ բավարար է (39), հատկապես այն դեպքերում, երբ արտապայմանագրային պրակտիկան հակասական է²³: Եվ հակառակը, Նիկարագուայի մասին գործում Միջազգային դատարանը, գնահատելով չմիջամտելու վերաբերյալ նորմի սովորութաիրավական կարգավիճակը, շատ մեծ նշանակություն տվեց այն փաստին, որ ՄԱԿ-ի Կանոնադրությունը վավերացրել են մոլորակի գործնականորեն բոլոր պետությունները²⁴: Կարող է լինել և այնպես, որ դեռևս ուժի մեջ չնստած պայմանագրի նորմն արտացոլի սովորության իրավունքը: Դա տեղի է ունենում այն դեպքում, երբ առկա է նմանատիպ պրակտիկա, այդ թվում՝ հատկապես շահագրգիռ պետությունների կողմից և ակնհայտ է, որ համապատասխան նորմը հազիվ թե լուրջ առարկությունների հանդիպի²⁵:

23 International Court of Justice, North Sea Continental Shelf cases, op. cit. (note 7), p. 42, § 73:

24 International Court of Justice, Case concerning Military and Paramilitary Activities in and against Nicaragua, op.cit. (note 12), pp. 99-100, § 188: Դատարանի որոշումը պատճառաբանված էր նաև այն համընդհանուր հավանությամբ, որով ընդունվեցին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի համապատասխան բանաձևերը, այդ թվում 2625 (XXV) բանաձևը, որը վերաբերում էր պետությունների միջև բարիդրացիական հարաբերություններին և ընդունվեց առանց քվեարկության:

25 International Court of Justice, Continental Shelf case, op. cit. (note 6), p. 33, § 34. (Դատարանը

Պրակտիկայում պայմանագրային նորմերի մշակումը համաշխարհային իրավաբանական հասարակությանն օգնում է սևեռել ուշադրությունը և աներկբա ազդեցություն է գործում պետությունների հետագա վարքագծի ու իրավական համոզմունքների վրա: Միջազգային դատարանը դա ճանաչեց Մայրցամաքային ելուստի գործով որոշման մեջ, հայտարարելով, որ «բազմակողմ համաձայնագրերը կարևոր դեր կարող են խաղալ սովորույթից ածանցյալ նորմերի արձանագրման և սահմանման՝ նույնիսկ մշակման գործում»²⁶: Այսպիսով, Դատարանը հաստատեց, որ պայմանագրերը կարող են կողիֆիկացնել մինչև իրենց ընդունումը գոյություն ունեցող սովորութային միջազգային իրավունքի նորմերը կամ նույնիսկ սկզբնավորել նոր սովորույթների ձևավորում, որոնք հիմնված են տվյալ պայմանագրերում բովանդակող նորմերի վրա: Դատարանն ավելի հեռուն գնաց, հայտարարելով, որ «հնարավոր է, ... կոնվենցիային շատ լայն և ներկայացուցչական մասնակցությունն ինքնին բավարար լինի՝ պայմանով, որ դրան միացել են այն պետությունները, որոնց շահերն այն առանձնակի է շոշափում»²⁷:

Հետագոտությունում կիրառված է կշռադատված մոտեցում, որի համաձայն լայն վավերացումը կարող է ծառայել սոսկ որպես բացահայտիչ և պետք է գնահատվի պրակտիկայի (նաև այն պետությունների պրակտիկայի, որոնք տվյալ պայմանագրի մասնակիցը չեն) այլ տարրերի հետ փոխկապակցված: Պետությունների հետևողական պրակտիկան դիտարկվել է որպես կարևոր դրական ապացույց, իսկ մասնակիցներ չհանդիսացող պետությունների հակադիր պրակտիկան՝ որպես վերջինից եկող կարևոր ապացույց: Որպես նշանակալի գործոն դիտարկվել է նաև այս կամ այն պայմանագրի մասնակից պետությունների պրակտիկան այն պետությունների նկատմամբ, որոնք այդ պայմանագրի կողմ չեն հանդիսանում:

Այսպիսով, հետագոտությունը չի սահմանափակվել այն պետությունների պրակտիկայի դիտարկմամբ, որոնք չեն մասնակցել միջազգային մարդասիրական իրավունքի ոլորտի պայմանագրերին: Եթե հաշվի առնվեր միայն 30-ից մի փոքր ավելի պետությունների պրակտիկան, որոնք չեն վավերացրել Լրացուցիչ արձանագրությունները, դա չէր համապատասխանի այն պահանջին, համաձայն որի սովորութային միջազգային իրավունքը պետք է հիմնվի լայնածավալ և ցուցադրանքակալ պայմանագրի միջազգային իրավունքը պետք է հիմնվի լայնածավալ և ցուցադրանքակալ պայմանագրի միջազգային իրավունքի գոյությունը սահմանելիս հաշվի է առնվել այն փաստը, որ հետագոտության հրապարակման պահին I Լրացուցիչ արձանագրությունը վավերացրած են եղել 162, իսկ II Լրացուցիչ արձանագրությունը՝ 157 պետություններ:

համարեց, որ բացառիկ տնտեսական գոտու մասին հասկացությունը ներառվել է սովորութային միջազգային իրավունքում, թեև Ծովային իրավունքի մասին ՄԱԿ-ի կոնվենցիան դեռ չի մտել ուժի մեջ, քանի որ բացառիկ տնտեսական գոտու մասին պահանջների թիվը 56-ից ավելի էր, որոնք, մասնավորապես, ստացվել էին առանձնակի շահագրգիռ պետություններից):

26 International Court of Justice, *Continental Shelf case*, op. cit. (note 6), pp. 29-30, § 27.
 27 International Court of Justice, *North Sea Continental Shelf cases*, op.cit. (note 7), p. 42, § 73. տե՛ս նաև ILA Report, op. cit. (note 13), Principles 20-21, 24, 26 and 27, pp. 754-765.

Հարկ է նշել, որ հետազոտությունն իր առջև նպատակ չի դրել բացահայտել միջազգային մարդասիրական իրավունքի յուրաքանչյուր պայմանագրային նորմի սովորության բնույթը, և այդ պատճառով պարտադրաբար չի հետևել գոյություն ունեցող պայմանագրերի կառուցվածքին: Հետազոտությունում տարբեր հարցեր վերլուծվել են ավելի շուտ նրա համար, որպեսզի պարզաբանվի, թե սովորության միջազգային իրավունքի որ նորմերը կարող են բխեցվել մակածան* միջոցով՝ հիմք ընդունելով տվյալ հարցերի հետ կապակցված պետությունների պրակտիկան: Քանի որ ընտրվել էր այնպիսի մոտեցում, որը չէր ենթադրում յուրաքանչյուր պայմանագրային դրույթի վերլուծություն՝ դրա սովորության կամ ոչ սովորության բնույթի բացահայտման առումով, ուստի ճիշտ չի լինի եզրակացնել, որ պայմանագրի այս կամ այն նորմը ոչ սովորությանն է՝ այն հիմնավորմամբ, որ չի արտացոլվել սույն հետազոտությունում:

Հետազոտության կազմակերպումը

Որոշելու համար, թե ինչպես լավագույնս օգտագործել այն մանդատը, որով օժտված էր ԿԽՄԿ-ն, հեղինակները խորհրդատվություններ անցկայրեցին միջազգային իրավունքի ոլորտի մի խումբ փորձագետների հետ, որոնք կազմավորեցին հետազոտության Ղեկավար կոմիտեն²⁸: 1996 թվականի հունիսին Ղեկավար կոմիտեն ընդունեց գործողությունների ծրագիր, և նույն թվականի հոկտեմբերին հետազոտությունը սկսվեց: Դրանում օգտագործվեցին պետությունների պրակտիկան արտացոլող ինչպես միջազգային, այնպես էլ ազգային աղբյուրներ:

Աշխատանքը տարվում էր վեց ուղղությամբ, որոնք համապատասխանում են հետազոտության գործողությունների ծրագրով որոշված մասերին.

- տարբերակման սկզբունք.
- առանձնահատուկ պաշտպանությունից օգտվող անձինք և օբյեկտներ.
- պատերազմ վարելու կոնկրետ մեթոդներ.
- զենքեր.
- քաղաքացիական անձանց և շարքից դուրս եկած անձանց նկատմամբ վարվելակերպ.
- իմպլեմենտացիա:

Հեղափոխություններ ազգային աղբյուրներում

Քանի որ երկրի ներսում ազգային աղբյուրներն ավելի մատչելի են, որոշվեց դիմել համապատասխան պետությունների հետազոտողների օգնու-

* Ինդուկցիա (թարգմանչի կողմից):

28 Ղեկավար կոմիտեի կազմում ընդգրկվեցին պրոֆեսորներ Ժորժ Աբի-Սահաբը, Սալահ Էլ-Դին Ամերը, Ուլե Բրինգը, Էրիկ Դավիդը, Ջոն Դյուգարը, Ֆլորենտինո Ֆելիչանոն, Հորսթ Ֆիշերը, Ֆրանսուազ Հենփտոնը, Թեոդոր Մերոնը, Ջամշիդ Մոմթազը, Միլան Շախտվիչը և Ռաուլ Էմիլիո Վինուեան:

թյանը: Այդ նպատակով մոտավորապես 50 երկրների (9-Աֆրիկայի, 11-Ամերիկայի,

15-Ասիայի, 1-Ավստրալիայի և 11-Եվրոպայի) ընտրվեց հետազոտողների խումբ, որոնց հանձնարարվեց նախապատրաստել զեկույցներ իրենց պետությունների պրակտիկայի վերաբերյալ²⁹: Երկրներն ընտրվում էին աշխարհագրական ներկայացուցչականության սկզբունքով՝ հաշվի առնելով ոչ հեռավոր անցյալում տարբեր տեսակի զինված ընդհարումներում նրանց պատերազմի վարման միջոցների և մեթոդների լայն սպեկտրի կիրառման փորձը:

Այն երկրների ռազմական հրահանգները և ազգային օրենսդրությունները, որոնց պետական պրակտիկան չէր ընդգրկվել զեկույցներում, նույնպես ուսումնասիրվում և ամփոփվում էին: Այդ աշխատանքը կատարվեց ԿԽՄԿ-ի պատվիրակությունների օգնությամբ ամբողջ աշխարհում, իսկ ԿԽՄԿ-ի միջազգային մարդասիրական իրավունքի ոլորտի Խորհրդատվական ծառայությունը հավաքեց մեծաթիվ փաստաթղթեր ազգային օրենսդրություններից:

Հեղազոտություններ միջազգային աղբյուրներում

Միջազգային աղբյուրների պետությունների պրակտիկային վերաբերող տվյալները հավաքում էին վեց խմբեր, որոնցից յուրաքանչյուրը կենտրոնացել էր հետազոտության մասերից մեկին համապատասխանող ուղղության վրա³⁰: Այդ խմբերը հետազոտություններ են իրականացրել ՄԱԿ-ում և միջազգային այլ կազմակերպություններում, այդ թվում՝ Աֆրիկյան միությունում (նախկինում՝ Աֆրիկյան միասնության կազմակերպություն), Եվրոպայի խորհրդում, Պարսից ծոցի պետությունների համագործակցության խորհրդում, Եվրոպական միությունում, Արաբական պետությունների լիգայում, Ամերիկյան պետությունների կազմակերպությունում, Իսլամական կոնֆերանսի կազմակերպությունում և Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունում: Նախադեպային իրավունքին վերաբերող նյութերը հավաքվել են այն չափով, որքան անհրաժեշտ էր սովորութային միջազգային իրավունքի նորմերի գոյությունն ապացուցելու համար:

29 Աֆրիկա. Ալժիր, Անգոլա, Բոթսվանա, Եգիպտոս, Եթովպիա, Նիգերիա, Ռուանդա, Հարավային Աֆրիկա և Չիմբաբվե. Ամերիկա. Արգենտինա, Բրազիլիա, Կանադա, Չիլի, Կոլումբիա, Կուբա, Սալվադոր, Նիկարագուա, Պերու, Ամերիկայի Միացյալ Նահանգներ և Ուրուգվայ. Ասիա. Չինաստան, Հնդկաստան, Ինդոնեզիա, Իրան, Իրաք, Իսրայել, Ճապոնիա, Հորդանան, Կորեայի Հանրապետություն, Քուվեյթ, Լիբանան, Մալայզիա, Պակիստան, Ֆիլիպիններ և Միրիա. Ավստրալիա. Եվրոպա. Բելգիա, Բոսնիա և Հերցեգովինա, Խորվաթիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Նիդեռլանդներ, Ռուսաստանի Գաշնություն, Իսպանիա, Մեծ Բրիտանիա և Հարավսլավիա:

30 Տարբերակման սկզբունք. պրոֆեսոր Ժորժ Աբի-Մահար (զեկույող) և Ժան-Ֆրանսուա Քեզիներ (հետազոտող). Առանձնահատուկ պաշտպանությունից օգտվող անձինք և օբյեկտներ. պրոֆեսոր Հորսթ Ֆիշեր (զեկույող), Գրեգոր Շոտեն և Հայքո Շալիկեր (հետազոտողներ). Պատերազմի վարման կոնկրետ մեթոդներ. պրոֆեսոր Թեոդոր Մերոն (զեկույող) և Ռիշար Դեգանե (հետազոտող). Չենքեր. պրոֆեսոր Ուվե Բրինգ (զեկույող) և Գուստավ Լինդ (հետազոտող). Քաղաքացիական և շարքից դուրս եկած անձանց նկատմամբ վարվելակերպ. Ֆրանսուազ Հենփտն (զեկույող) և Քամիլ Գիֆար (հետազոտող). Իմպլեմենտացիա. Երիկ Գավիլդ (զեկույող) և Ռիշար Դեգանե (հետազոտող):

Հերագոտություններ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի արխիվներում

Ի լրումն միջազգային և ազգային աղբյուրներում իրականացված հետազոտությունների, ԿԽՄԿ-ն վերլուծեց իր սեփական արխիվները, որոնք վերաբերում են ոչ վաղ անցյալի մոտավորապես 40 զինված ընդհարումներին (21-Աֆրիկայում, 2-Ամերիկայում, 8-Ասիայում և 8-Եվրոպայում)³¹: Ընդհանրապես, ընդհարումներն ընտրվել են այն սկզբունքով, որպեսզի պետական պրակտիկայի վերաբերյալ զեկույցներում չընդգրկված երկրներն ու ընդհարումները նույնպես արտացոլվեն հետազոտությունում:

Շնորհիվ այն հանգամանքի, որ հետազոտությունները տարվել են միանգամից երեք ուղղություններով՝ միջազգային և ազգային աղբյուրներում, ինչպես նաև ԿԽՄԿ-ի արխիվներում, հետազոտությունում հաջողվել է արտացոլել աշխարհի բոլոր տարածաշրջանների պրակտիկան: Սակայն իրատես լինենք. հետազոտությունը, այնուամենայնիվ, չի կարող հավակնել համապարփակության: Այն սևեռված է վերջին 30 տարիների պրակտիկայի վրա՝ որպեսզի արդյունքում հաստատվի ժամանակակից սովորության միջազգային իրավունքը, սակայն անհրաժեշտության դեպքում օրինակներ են բերվել նաև ավելի վաղ պրակտիկայից:

Խորհրդակցություններ փորձագետների հետ

Խորհրդակցությունների առաջին շարքի շրջանակներում ԿԽՄԿ-ն միջազգային հետազոտական խմբերին առաջարկեց կազմել յուրօրինակ սեղմագիր, որը կներառեր սովորության իրավունքի նախնական գնահատականը՝ հիմնվելով կուտակված պրակտիկայի վրա: Այդ սեղմագրերը քննարկվել են Ղեկավար կոմիտեի երեք նստաշրջաններում, որ կայացել են 1998 թվականին Ժնևում: Այնուհետև, խորհրդակցությունների երկրորդ փուլի շրջանակներում տվյալ սեղմագրերը պատշաճ կերպով խմբագրվել են և փոխանցվել աշխարհի բոլոր տարածաշրջանների ակադեմիական շրջանակներն ու կառավարությունները ներկայացնող փորձագետների քննարկմանը: ԿԽՄԿ-ն այդ փորձագետներին հրավիրեց անձնապես մասնակցել Ղեկավար կոմիտեի երկու նստաշրջաններին, որոնք կայացան 1999 թվականին Ժնևում: Այնտեղ նրանք

31 Աֆրիկա. Անգոլա, Բուրունդի, Չադ, Չադ-Լիբիա, Կոնգոյի ժողովրդավարական Հանրապետություն, Ջիբութի, Էրիթրեա-Եմեն, Եթովպիա (1973-1994 թթ.), Լիբերիա, Մոզամբիկ, Նամիբիա, Նիգերիա-Կամերուն, Ռուանդա, Սենեգալ, Սենեգալ-Մավրիտանիա, Սիեռա-Լեոնե, Սոմալի, Սոմալի-Եթովպիա, Սուդան, Ուգանդա և Արևմտյան Սահարա. Ամերիկա. Գվատեմալա և Մեքսիկա. Ասիա. Աֆղանստան, Կամբոջա, Հնդկաստան (Ջամմու և Կաշմիր), Պապուա Նոր Գվինեա, Շրի Լանկա, Տաջիկստան, Եմեն և Եմեն-Էրիթրեա (տե՛ս նաև Աֆրիկայում). Եվրոպա. Հայաստան-Ադրբեջան (Լեռնային Ղարաբաղ), Կիպրոս, նախկին Հարավսլավիա (ընդհարում Հարավսլավիայում (1991-1992թթ.), ընդհարում Բոսնիայում և Հերցեգովինայում (1992-1996թթ.), ընդհարում Խորվաթիայում (Կրաինա) (1992-1995թթ.), Վրաստան (Աբխազիա), Ռուսաստանի Գաշնություն (Չեչնիա) և Թուրքիա:

օգնություն ցուցաբերեցին կուտակված պրակտիկայի գնահատման գործում և բացահայտեցին թույլ տրված բացերը³²:

Զեկույցի շարադրումը

Ղեկավար կոմիտեի տված գնահատականը և ակադեմիական շրջանակները և կառավարությունները ներկայացնող փորձագետների կողմից կատարված խմբագրումը հիմք ծառայեց զեկույցի վերջնական տարբերակի շարադրման համար: Հետազոտության հեղինակները ևս մեկ անգամ դիտարկեցին պրակտիկան, կատարեցին սովորույթի գոյության նոր գնահատում, վերանայեցին ձևակերպումները, նորմերի հաջորդականությունը և կազմեցին մեկնաբանությունների նախագիծը: Վերջիններս ներկայացվեցին Ղեկավար կոմիտեին, նշված փորձագետների խմբին և ԿԽՄԿ-ի իրավաբանական բաժնին, որոնց առաջարկվեց անել իրենց դիտողությունները: Տեքստի մեջ վերջին փոփոխությունները կատարելուց հետո մշակվեց վերջնական տարբերակը՝ հաշվի առնելով արված դիտողությունները:

Համառոտ եզրակացություններ

Ժնևի կոմվենցիաների դրույթների մեծ մասը, այդ թվում 3-րդ՝ ընդհանուր հոդվածը, համարվում են սովորութային միջազգային իրավունքին պատկանող:³³ Բացի դրանից, այսօրվա դրությամբ Ժնևի կոմվենցիաներն ունեն 192 մասնակից և, որպես պայմանագրային իրավունքի գործիք, փոխկապակցում են գործնականորեն բոլոր պետությունները: Այդ պատճառով կոմվենցիաների դրույթների սովորութային բնույթը հետազոտությունում հատուկ չի քննարկվել:

32 Խորհրդակցություններին անճնապես մասնակցեցին ակադեմիական շրջանակներն ու կառավարությունները ներկայացնող հետևյալ փորձագետները. Աբդուլլա Ադ-Գուրիհ (Իրաք), Փոլ Բերմանը (Մեծ Բրիտանիա), Սադի Չայջին (Թուրքիա), Մայքլ Քաուլինգը (Հարավային Աֆրիկա), Էդվարդ Քամինգզը (ԱՄՆ), Անտոնիո դը Իկասան (Մեքսիկա), Յորամ Գանշտեյնը (Իսրայել), Ժան-Միշել Ֆավրը (Ֆրանսիա), Ուիլյամ Ֆենրիկը (Կանադա), Դիթեր Ֆլեկը (Գերմանիա), Խուան Կառլոս Գոմես Ռամիրեսը (Կոլումբիա), Ջամշիդ Ա. Համիդը (Պակիստան), Արթուրո Էռնանդես-Բասավեն (Մեքսիկա), Իբրահիմ Իդրիսը (Եթովպիա), Հասան Քասեմ Ժունիս (Լիբանան), Քենեթ Քեյթը (Նոր Զելանդիա), Գիլբերտ Մունգալին (Քենիա), Ռեյն Մյուլերսոնը (Էստոնիա), Բարա Նյանգը (Սենեգալ), Մոհամմադ Օլվանը (Հորդանան), Ռաուլ Ս. Պանգալանգանը (Ֆիլիպիններ), Ստեփոս Պերակիսը (Հունաստան), Պատու Սերջիու Պինեյրուն (Բրազիլիա), Արպադ Պրանդլերը (Հունգարիա), Փեմարաջու Շրինիվասա Ռանն (Հնդկաստան), Քամիլո Ռեյես Ռոդրիգեսը (Կոլումբիա), Իբսե Ե. Սագահն (Սիզերիա), Հարոլդ Սանդրվալը (Կոլումբիա), Սոմբուն Սանգիյանբուտը (Թաիլանդ), Մարատ Ա. Սարսեմբակը (Ղազախստան), Մուհամմադ Ազիզ Շուխրին (Միդիա), Պարլաունգան Սիհոմբինգը (Ինդոնեզիա), Ջեֆրի Ջեյմս Սքիլերը (Ավստրալիա), Հոշուն Սունը (Չինաստան), Բախսի-ար Թուզմուհամեդովը (Ռուսաստան) և Կարոլ Վոլֆքսը (Լեհաստան):

33 Միջազգային դատարանի՝ Միջուկային զենքով սպառնալու կամ այն կիրառելու օրինականության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություն, op.cit. (note 8), pp. 257-258, §§ 79 and 82 (Ժնևի կոմվենցիաներին վերաբերող) և Case concerning Military and Paramilitary Activities in and against Nicaragua, op. cit. (note 12), p. 114, § 218 (ընդհանուր 3-րդ հոդվածին վերաբերող):

Հիմնական ուշադրությունը դրանում կենտրոնացվել է ոչ բոլոր պետությունների կողմից վավերացված պայմանագրերով կարգավորվող հարցերին, այդ թվում՝ Լրացուցիչ արձանագրություններով, Մշակութային արժեքների պաշտպանության Հասագայի կոնվենցիայով և զենքի կիրառումը կանոնակարգող կոնկրետ բնույթի մի շարք կոնվենցիաներով:

Սովորության միջազգային իրավունքի նորմերի ստորև բերված ցանկում չի պարզաբանվում, թե ինչու է այս կամ այն նորմը համարվել սովորության, և չի ներկայացվում այն պրակտիկան, որի հիման վրա է նման եզրահանգում արվել: Նորմերի՝ սովորության իրավունքի շարքը դասելու վերաբերյալ պատասխանները տրվում են հետազոտության առաջին հատորում, իսկ համապատասխան պրակտիկան՝ երկրորդում:

Միջազգային զինված ընդհարումները

Ի Լրացուցիչ արձանագրությունը ոչ միայն կողիֆիկացիայի ենթարկեց սովորության միջազգային իրավունքի՝ մինչև իր ընդունումը գոյություն ունեցած նորմերը, այլև նոր սովորության նորմերի ձևավորման հիմքը դրեց: Հետազոտության շրջանակներում կուտակված պրակտիկան վկայում է պետությունների պրակտիկայի վրա Ի Լրացուցիչ արձանագրության խոր ազդեցության մասին, ընդ որում՝ դա վերաբերում է ինչպես միջազգային, այնպես էլ ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումներին (տես ստորև): Մասնավորապես, հետազոտությունը ցույց տվեց, որ Ի Լրացուցիչ արձանագրության հիմնարար սկզբունքները շատ լայն ճանաչման արժանացան, ավելի լայն, քան կարելի էր ենթադրել՝ ելնելով դրա վավերացման վիճակագրությունից:

Թեև հետազոտությունը նպատակ չի ունեցել բացահայտելու պայմանագրային տարբեր նորմերի սովորության բնույթը, այդուհանդերձ աշխատանքի եզրափակիչ փուլում պարզ դարձավ, որ կան բազմաթիվ սովորության նորմեր, որոնք նմանատիպ կամ նույնական են պայմանագրային նորմերին: Սովորության համարված այն նորմերի օրինակների թվում, որոնք նմանօրինակներ ունեն Ի Լրացուցիչ արձանագրության համապատասխան դրույթների շարքում, կարելի է նշել, մասնավորապես, քաղաքացիական անձանց և պատերազմող պետությունների զինված ուժերի կազմում ընդգրկված և ռազմական գործողություններին անմիջականորեն մասնակցող անձանց (կոմբատանտներ), քաղաքացիական և ռազմական օբյեկտների տարբերակման սկզբունքը,³⁴ ոչ ընտրովի բնույթի հարձակումների արգելումը,³⁵ հարձակման ժամանակ համաշփոթյան սկզբունքը,³⁶ հարձակվելիս բոլոր հնարավոր նախազգուշական միջոցները ձեռնարկելու և հարձակման հետևանքները կանխելու պարտականությունը,³⁷ բուժանձնակազմը և հոգևոր անձնակազմը, բուժկազմավորումները

34 Տե՛ս Customary International Humanitarian Law, op.cit (note 4), Vol. I, Rules 1 and 7:

35 Նույն տեղում, 11-13 կանոններ:

36 Նույն տեղում, 14 կանոն:

37 Նույն տեղում, 15-24 կանոններ:

և սանիտարական տրանսպորտը.³⁸ մարդասիրական օգնություն տրամադրող անձնակազմին և օբյեկտները³⁹, ինչպես նաև քաղաքացիական լրագրողներին⁴⁰ հարգելու և պաշտպանելու պարտականությունը. բժշկական գործառույթներ կատարող անձանց պաշտպանության տրամադրումը.⁴¹ չպաշտպանվող տեղանքների և ապառազմականացված գոտիների վրա հարձակումների արգելումը.⁴² շարքից դուրս եկած հակառակորդի զինծառայողներին խնայելու և պաշտպանելու պարտականությունը.⁴³ որպես պատերազմի վարման միջոց սովահարությունն օգտագործելու արգելումը.⁴⁴ քաղաքացիական բնակչության գոյատևման համար անհրաժեշտ օբյեկտների վրա հարձակման արգելումը.⁴⁵ խորհրդանշանների չարաշահման և ուխտադրժության արգելումը.⁴⁶ այն հիմնական երաշխիքների պահպանման պարտականությունը, որոնցով օժտված են քաղաքացիական անձինք և շարքից դուրս եկած անձինք.⁴⁷ անհայտ կորածների գրանցումն իրականացնելու պարտականությունը.⁴⁸ և կանանց ու երեխաներին տրամադրվող հատուկ պաշտպանությունը.⁴⁹

Ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումներ

Վերջին տասնամյակների ընթացքում կուտակվել է բավականին մեծ փորձ, որը վկայում է այն մասին, որ առկա է պահանջ, որպեսզի միջազգային մարդասիրական իրավունքի տրամադրած պաշտպանության գործողությունը տարածվի նաև ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումների վրա: Համապատասխան պրակտիկան նշանակալիորեն ազդել է ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումների ժամանակ կիրառվող սովորության իրավունքի ձևավորման վրա: Ինչպես և I Լրացուցիչ արձանագրությունը, II Լրացուցիչ արձանագրությունը պրակտիկայի համար ունեցավ հեռուն զնայող հետևանքներ: Արդյունքում, դրա շատ դրույթներ այսօր դիտարկվում են որպես սովորության միջազգային իրավունքի բաղկացուցիչ մաս: Սովորության դարձած և II Լրացուցիչ արձանագրության դրույթների շարքում անալոզներ ունեցող նորմերի օրինակներ են՝ քաղաքացիական անձանց վրա հարձակումների արգելումը.⁵⁰ բուժանձնակազմը և հոգևոր անձնակազմը, բուժկազմավորումներն ու սանի-

38 Նույն տեղում, 25 և 27-30 կանոններ:
39 Նույն տեղում, 31-32 կանոններ:
40 Նույն տեղում, 34 կանոն:
41 Նույն տեղում, 26 կանոն:
42 Նույն տեղում, 36-37 կանոններ:
43 Նույն տեղում, 46-48 կանոններ:
44 Նույն տեղում, 53 կանոն:
45 Նույն տեղում, 54 կանոն:
46 Նույն տեղում, 57-65 կանոններ:
47 Նույն տեղում, 87-105 կանոններ:
48 Նույն տեղում, 117 կանոն
49 Նույն տեղում, 134-137 կանոններ:
50 Նույն տեղում, 1 կանոն:

տարական տրանսպորտը հարգելու և պաշտպանելու պարտականությունը.⁵¹ բժշկական գործառույթներ կատարող անձանց պաշտպանության տրամադրումը.⁵² սովահարությունը՝ որպես պատերազմի վարման միջոց օգտագործելու արգելումը.⁵³ քաղաքացիական բնակչության գոյատևման համար անհրաժեշտ օբյեկտների վրա հարձակումների արգելումը.⁵⁴ քաղաքացիական և շարքից դուրս եկած անձանց տրված հիմնական երաշխիքների պահպանման պարտականությունը.⁵⁵ վիրավորներին, հիվանդներին և նավաբեկյալներին որոնելու, հարգելու և պաշտպանելու պարտականությունը.⁵⁶ մահացածների աճյունները որոնելու և դրանց նկատմամբ հարգալից վերաբերմունք դրսևորելու պարտականությունը.⁵⁷ ազատագրված անձանց պաշտպանության տրամադրումը.⁵⁸ քաղաքացիական բնակչության հարկադիր տեղափոխությունների արգելումը.⁵⁹ և կանանց ու երեխաներին տրամադրվող հատուկ պաշտպանությունը.⁶⁰

Սակայն, սովորության միջազգային իրավունքի ամենանշանակալի ավանդը ներքին զինված ընդհարումների կանոնակարգման գործում հանդիսանում է այն, որ այդ ավանդը բավականին դուրս է գալիս II Լրացուցիչ արձանագրության դրույթների շրջանակներից: Իսկապես, պրակտիկան ծնեց մի ամբողջ շարք սովորության նորմեր՝ առավել մանրամասնված, քան հաճախ II Լրացուցիչ արձանագրության ռուդիմենտային դրույթներն են, և այդպիսով, լրացրեց ներքին ընդհարումների կանոնակարգման բացթողումները:

Օրինակ, II Լրացուցիչ արձանագրությունը ռազմական գործողությունների վարումը կարգավորում է միայն ամենաընդհանուր ձևով: Այսպես, 13 հոդվածը նախատեսում է, որ «քաղաքացիական բնակչությունը որպես այդպիսին, ինչպես նաև առանձին քաղաքացիական անձինք չպետք է լինեն հարձակման օբյեկտ... բացառությամբ այն դեպքերի և այնպիսի ժամանակահատվածում, քանի դեռ նրանք անմիջականորեն մասնակցում են ռազմական գործողություններին»: Ի տարբերություն I Լրացուցիչ արձանագրության, II Լրացուցիչ արձանագրությունը չի բովանդակում տարբերակման և համաչափության սկզբունքներին վերաբերող հատուկ նորմեր և սահմանումներ:

II Լրացուցիչ արձանագրության մեջ՝ ռազմական գործողությունների վարման կանոնակարգման հարյուր տեղ գտած բացերը մեծապես լրացվեցին պետությունների պրակտիկայի շնորհիվ, որը կյանքի կոչեց I Լրացուցիչ արձանագրության դրույթներին նմանօրինակ նորմեր, որոնք, սակայն կիրառելի են ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումներում: Դրանք ընդգրկում են ռազ-

51 Նույն տեղում, 25 և 27-30 կանոններ:
 52 Նույն տեղում, 26 կանոն:
 53 Նույն տեղում, 53 կանոն:
 54 Նույն տեղում, 54 կանոն:
 55 Նույն տեղում, 87-105 կանոններ:
 56 Նույն տեղում, 109-111 կանոններ:
 57 Նույն տեղում, 112-113 կանոններ:
 58 Նույն տեղում, 118-119, 121 և 125 կանոններ:
 59 Նույն տեղում, 29 կանոն:
 60 Նույն տեղում, 134-137 կանոններ:

մական գործողությունների վարման հիմնասկզբունքները և ներառում են նորմեր, որոնք վերաբերում են հատուկ պաշտպանությունից օգտվող անձանց և օբյեկտներին, ինչպես նաև ռազմական գործողությունների վարման կոնկրետ մեթոդներին⁶¹:

Նմանապես, II Լրացուցիչ արձանագրությունը բովանդակում է մարդասիրական օգնության կարիքը զգացող քաղաքացիական բնակչության վերաբերյալ սոսկ շատ ընդհանուր դրույթ: Ըստ 18 (2) հոդվածի, «Եթե քաղաքացիական բնակչությունը չափից ավելի ծանր զրկանքներ է կրում իր գոյության համար էապես կարևոր այնպիսի պաշարներով անբավարար ապահովված լինելու պատճառով... ապա անցկացվում են քաղաքացիական բնակչությանն օգնություն ցուցաբերելու գործողություններ, որոնք կրում են բացառապես մարդասիրական և անկողմնակալ բնույթ, և իրականացվում են առանց որևէ անբարենպաստ տարբերության»: Ի տարբերություն I Լրացուցիչ արձանագրության, II Լրացուցիչ արձանագրությունը չի բովանդակում հատուկ դրույթներ, որոնք կպահանջեին օգնություն ցուցաբերելու գործողություններում ներգրավված անձնակազմի և օբյեկտների նկատմամբ հարգանք և պաշտպանություն, ընդհարման կողմերին կպարտադրեին թույլատրել կարիք ունեցող բնակչության համար նախատեսված մարդասիրական օգնության արագ և անարգել տեղափոխումը, նպաստել դրան՝ ապահովելով գործողության մեջ ներգրավված և համապատասխան թույլտվություն ունեցող անձնակազմի ազատ տեղաշարժի հնարավորությունը: Թեև այդ առիթով թույլատրելի է պնդել, որ տվյալ պահանջները ոչ բացահայտորեն նախատեսված են Արձանագրության 18 (2) հոդվածով: Այսպես թե այնպես, խնդրո առարկա պահանջներն այդ ոլորտի լայնածավալ, ցուցադրաներկայացուցչական և գործնականորեն միատեսակ պրակտիկայի շնորհիվ հստակեցվել են որպես սովորութային միջազգային իրավունքի նորմեր, որոնք կիրառելի են ինչպես միջազգային, այնպես էլ ներքին միջազգային ընդհարումներում:

Այդ առնչությամբ հարկ է նշել, որ թեև ինչպես I Լրացուցիչ արձանագրությունը, այնպես էլ II Լրացուցիչ արձանագրությունը պահանջում են շահագրգիռ կողմերի համաձայնությունն օգնություն ցույց տալու գործողություններ իրականացնելու վերաբերյալ⁶², այդուհանդերձ հավաքված պրակտիկ նյութերի մեծ մասում այդ պահաջը չի հիշատակվում: Ընդ որում, ինքնին հաս-

61 Տե՛ս, օրինակ, նույն տեղում, 7-10 կանոնները (քաղաքացիական և ռազմական օբյեկտների տարբերակում), 11-13 կանոններ (ոչ ընտրովի հարձակումներ), 14 կանոնը (համաչափությունը հարձակման ժամանակ), 15-21 կանոնները (նախազգուշական միջոցները հարձակման ժամանակ), 22-24 կանոնները (նախազգուշական միջոցները հարձակման հետևանքների նկատմամբ), 31-32 կանոնները (մարդասիրական անձնակազմը և օգնություն ցույց տալու գործողություններում ներգրավված օբյեկտները) 34 կանոնը (քաղաքացիական լրագրողներ), 35-37 կանոնները (պաշտպանության ներքո գտնվող գոտիները), 46-48 կանոնները (ոչ մեկին կենդանի չթողնելու մասին հրաման), 55-56 կանոնները (մարդասիրական օգնության մատչելիությունը), 57-65 կանոնները (խաբեություն):

62 Տե՛ս I Լրացուցիչ արձանագրությունը, 70 (1) հոդված և II Լրացուցիչ արձանագրությունը, 18 (2) հոդված:

կանալի է, որ մարդասիրական կազմակերպությունը չի կարող գործել առանց համապատասխան կողմի համաձայնության: Մակայն, նման թույլտվություն տրամադրելը չի կարող մերժվել առանց որևէ հիմնավորման: Եթե հաստատված է, որ քաղաքացիական բնակչությանն սպառնում է սով, իսկ մարդասիրական կազմակերպությունը, որն օգնություն է տրամադրում առանց որևէ անբարենպաստ տարբերակման, անաշառության սկզբունքի հիման վրա, ընդունակ է շտկել իրավիճակը, ապա համապատասխան կողմը պարտավոր է տալ իր համաձայնությունը⁶³: Թեև կամայական մերժումը համարվում է անընդունելի, պրակտիկան ճանաչում է, որ համապատասխան կողմն իրավասու է վերահսկել օգնություն ցույց տալու գործողությունը, իսկ դրան մասնակցող մարդասիրական անձնակազմը պարտավոր է պահպանել տվյալ երկիր մուտք գործելու վերաբերյալ ներքին օրենսդրությունը, ինչպես նաև անվտանգությանն առնչվող գործող պահանջները:

Հեղափոխ ուսումնասիրություն պահանջող հարցեր

Հետազոտությունը բացահայտեց նաև մի շարք ոլորտներ, որտեղ պրակտիկայում մնում են չպարզաբանված խնդիրներ: Օրինակ, «կոմբատանտներ» և «քաղաքացիական անձինք» հասկացությունները հստակ սահմանված են միջազգային զինված ընդհարումների համար⁶⁴, սակայն, ինչ վերաբերում է ներքին ընդհարումներին, պրակտիկան միանշանակ պատասխան չի տալիս այն հարցին՝ համարե՞լ, արդյոք, զինված գործողությունների վարման նպատակով ներգրավված ընդդիմադիր զինված կազմավորումների մասնակիցներին կոմբատանտներ, թե քաղաքացիական անձինք: Մասնավորապես, պարզ չէ, հանդիսանո՞ւմ են, արդյոք, ընդդիմադիր զինված կազմավորումների մասնակիցները քաղաքացիական անձինք, որոնք կորցնում են հարձակումներից պաշտպանության երաշխիքը, երբ անմիջականորեն մասնակցում են մարտական գործողություններին, թե՞ նրանք որպես այդպիսիք, հանդիսանում են հարձակման օրինական օբյեկտ: Այդ անորոշությունն իր արտացոլումը գտավ նաև պայմանագրային իրավունքում: Այսպես, II Լրացուցիչ արձանագրությունը չի բովանդակում քաղաքացիական անձանց և քաղաքացիական բնակչության սահմանումը, թեև այդ տերմիններն օգտագործվում են նրա բազմաթիվ դրույթներում⁶⁵: Նաև ավելի ուշ ընդունված պայմանագրերում, որոնք կիրառվում են ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումների ժամանակ, «քաղաքացիական անձինք» և «քաղաքացիական բնակչություն» տերմիններն օգտագործվում են առանց սահմանման⁶⁶:

63 St'u Yves Sandoz Christophe Swinarski, Bruno Zimmermann (eds.), Commentary on the Additional Protocols, ICRC, Geneva, 1987, § 4885. տե՛ս նաև § 2805:

64 St'u Customary International Humanitarian Law, op.cit. (note 4), Vol. I, Rule 3 (combatants), Rule 4 (armed forces) and Rule 5 (civilians and civilian population):

65 II Լրացուցիչ արձանագրություն, 13-15 և 17-18 հոդվածներ:

66 St'u, օրինակ, Որոշակի տեսակի սովորական զենքերի մասին կոնվենցիային կից II Արձանագրություն՝ փոփոխված և լրացված, 3(7)-(11) հոդված, Որոշակի տեսակի սովորական

Դրա հետ է կապված նաև ինչպես միջազգային, այնպես էլ ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումների կարգավորման ոլորտի անորոշության ևս մեկ գոտի: Այն է՝ «ռազմական գործողությունների անմիջական մասնակցություն» եզրույթի հստակ սահմանման բացակայությունը: Հարձակումից պաշտպանության երաշխիքի կորստի հետ ամեն ինչ պարզ է, և այն վիճահարույց չէ, երբ քաղաքացիական անձը կիրառում է զենք կամ բռնի գործողություններ կատարելու այլ միջոցներ հակառակորդի զինված ուժերի անձնակազմի կամ գույքի նկատմամբ: Դրա հետ մեկտեղ գոյություն ունի պրակտիկայի բավականին մեծ ծավալ, որը նվազ չափով է օգնում կամ ընդհանրապես չի օգնում մեկնաբանել «ռազմական գործողություններին անմիջական մասնակցություն» հասկացությունը: Այն կամ առաջարկում է գնահատել յուրաքանչյուր կոնկրետ դեպք, կամ պարզապես կրկնում է այն ընդհանուր նորմը, համաձայն որի՝ ռազմական գործողություններին անմիջական մասնակցությունը հանգեցնում է քաղաքացիական անձանց հարձակումից պաշտպանության կորստի: Դրա հետ է կապված նաև այն հարցը, թե ինչպես պետք է որակվի անձը կասկածի դեպքում: Նշված անորոշությունների առկայության պատճառով ԿԽՄԿ-ն ձգտում է պարզաբանել «ռազմական գործողություններին անմիջական մասնակցություն» հասկացությունը՝ գումարելով փորձագետների խորհրդակցություններ, որոնցից առաջինը կայացել է 2003 թվականին⁶⁷:

Բայ է մնում նաև համաչափության սկզբունքի ծավալի և կիրառման մասին հարցը: Հետազոտությունը բացահայտեց այդ սկզբունքի լայն աջակցությունը, սակայն պրակտիկան դրա պարզաբանման մեջ ոչ մի նոր բան չի ներմուծում պայմանագրային իրավունքի այն դրույթների համեմատությամբ, որոնք ցույց են տալիս, թե ինչպես պետք է ապահովել համաչափություն ռազմական առավելության և քաղաքացիական անձանց շրջանում ուղեկցվող կորուստների միջև:

Ռազմական գործողությունների վարման ընտրովի հարցերը

I և II Լրացույցի արձանագրությունները ներմուծեցին նոր նորմ, որն արգելում է հարձակվել վտանգավոր ուժեր պարունակող օբյեկտների և կայանքների վրա, եթե դրանք նույնիսկ ռազմական օբյեկտներ են հանդիսանում՝ եթե նման հարձակումը կարող է արձակել այդ ուժերը և հանգեցնել քաղաքացիական բնակչության մեծ կորուստների⁶⁸: Թեև պարզ չէ, դարձան, արդյոք, այդ կոնկրետ նորմերը սովորությանին իրավունքի բաղկացուցիչ մասը, սա-

զենքերի մասին կոնվենցիային կից III Արձանագրություն, 2 հոդված, Հակահետևակային ակամների արգելման մասին Օտտավայի կոնվենցիա, նախաբան, Միջազգային քրեական դատարանի ստատուտ, 8 (2) (e)(i), (iii) և (viii) հոդված:

67 Տե՛ս, օրինակ, Direct Participation in Hostilities under International Humanitarian Law, Report prepared by the International Committee of the Red Cross, Geneva, September 2003. Չեկույցի կարելի է ծանոթանալ ԿԽՄԿ-ի կայքում. www.icrc.org.

68 I Լրացույցի արձանագրություն, 56 (1) հոդված (2-րդ կետում նշված բացառություններով), և II Լրացույցի արձանագրություն, 15 հոդված (առանց բացառությունների):

կայն պրակտիկական վկայում է, որ պետությունները գիտակցում են ուղեկցող կորուստների մեծ ռիսկն այդ օբյեկտների և կայանքների վրա հարձակվելիս՝ եթե վերջիններս ռազմական նպատակակետ են հանդիսանում: Ընդ որում, պետությունները ընդունում են, որ ցանկացած զինված ընդհարման շրջանակներում հարձակման ժամանակ պետք է ձեռնարկվեն նախազգուշական հատուկ միջոցառումներ՝ վտագավոր ուժերի արձակումից և քաղաքացիական բնակչության մեծ կորուստներից խուսափելու համար, և համապատասխան պահանջը համարվեց ներառված ցանկացած զինված ընդհարման ժամանակ կիրառվող սովորության միջազգային իրավունքի մեջ:

I Լրացուցիչ արձանագրության ներմուծած ևս մեկ նորմ դարձավ պատերազմի վարման այնպիսի մեթոդների կամ միջոցների օգտագործման արգելումը, որոնք նպատակ ունեն կամ ենթադրաբար կարող են երկարաժամկետ, լայնածավալ և լուրջ վնաս հասցնել շրջակա միջավայրին: I Լրացուցիչ արձանագրության ընդունման պահից այդ արգելքը պետությունների պրակտիկայում արժանացավ այնպիսի լայն աջակցության, որ հստակեցվեց որպես սովորության իրավունքի նորմ, թեև որոշ պետություններ բազմիցս պնդել են, որ տվյալ նորմը չի կիրառվում միջուկային զենքի նկատմամբ և հետևաբար, իրենք չեն կարող այդ իմաստով պարտավորված համարվել⁶⁹: Հետագոտության հեղինակներն այդ կոնկրետ նորմից ավելի հեռուն գնացին և հանգեցին եզրակացության, որ բնական միջավայրը համարվում է քաղաքացիական օբյեկտ և որպես այդպիսին, պաշտպանվում է նույն սկզբունքներով և նորմերով, որոնք պաշտպանում են այլ քաղաքացիական օբյեկտները, մասնավորապես, տարբերակման և համաչափության սկզբունքներով, ինչպես նաև հարձակման ժամանակ նախազգուշական միջոցներ ձեռնարկելու պահանջով: Դա նշանակում է, որ բնական միջավայրի և ոչ մեկ տարր չի կարող դարձվել հարձակման օբյեկտ, եթե այն ռազմական օբյեկտ չէ, և որ արգելվում է հարձակվել ռազմական օբյեկտի վրա, եթե, ինչպես սպասվում է, այդ հարձակումը կարող է ուղեկցող այնպիսի վնաս հասցնել բնական միջավայրին, որը չափից ավելի մեծ կլինի ենթադրաբար սպասվելիք կոնկրետ և անմիջական ռազմական առավելության նկատմամբ: Օրինակ, միջուկային զենքի և դրա կիրառման սպառնալիքի վերաբերյալ Խորհրդատվական եզրակացությունում Միջազգային դատարանը հայտարարեց, որ «պետությունները պետք է հաշվի առնեն բնապահպանական նկատառումները՝ օրինական ռազմական նպատակներին հասնելու ընթացքում անհրաժեշտը և համաչափը գնահատելիս»⁷⁰: Բացի դրանից, ընդհարման կողմերը ռազմական գործողություններ վարելիս պարտավոր են ձեռնարկել բոլոր հնարավոր նախազգուշական միջոցները, որպեսզի խուսափեն բնական միջավայրին պատահական վնաս հասցնելուց կամ, համեմայն դեպ, այն հասցնել նվազագույնի: Բնական միջավայրի համար որոշ ռազմա-

69 St'cu Customary International Humanitarian Law, op.cit. (note 4), Vol. I, Rule 45:

70 Միջազգային դատարանի՝ Միջուկային զենքով սպառնալու կամ այն կիրառելու օրինականության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություն, op. cit. (note 8), § 30:

կան գործողությունների հետևանքների վերաբերյալ ստույգ գիտական տվյալների բացակայությունը ընդհարման կողմին չի ազատում նախազգուշական նշված միջոցները ձեռնարկելու պարտականությունից⁷¹:

Կան նաև մի շարք հարցեր, որոնք անմիջականորեն չեն շոշափվում Լրացուցիչ արձանագրություններում: Օրինակ, Լրացուցիչ արձանագրությունները չեն բովանդակում խաղաղության պահպանության առաքելությունում գործող անձնակազմին և օբյեկտներին վերաբերող կոնկրետ դրույթներ: Պրակտիկայում նման անձնակազմին և օբյեկտներին տրամադրվում էր պաշտպանություն հարձակումներից, որը համարժեք է այն պաշտպանությանը, որից օգտվում են քաղաքացիական անձինք և օբյեկտները: Արդյունքում պետությունների պրակտիկայում մշակվեց նորը, որն արգելում է հարձակվել ՄԱԿ-ի Կանոնադրության հիման վրա իրականացվող՝ խաղաղության պահպանման առաքելության շրջանակներում գործող անձնակազմի և օբյեկտների վրա, քանի դեռ դրանք օգտվում են պաշտպանության այն իրավունքից, որից՝ ըստ միջազգային մարդասիրական իրավունքի, օգտվում են քաղաքացիական անձինք ու օբյեկտները, և այդ նորմը ներառվեց Միջազգային քրեական դատարանի Կանոնադրությունում: Այն դարձավ ցանկացած տեսակի զինված ընդհարման ժամանակ կիրառվող սովորութային միջազգային իրավունքի բաղկացուցիչ մասը⁷²:

Ռազմական գործողությունների վարմանը վերաբերող մի շարք հարցեր կարգավորվում են Հաագայի կանոնակարգով, որը վաղուց արդեն համարվում է միջազգային զինված ընդհարումներում կիրառելի սովորութային իրավունք⁷³: Ընդ որում, Կանոնակարգի որոշ նորմեր ճանաչում են գտել որպես սովորութային նորմեր ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումներում: Օրինակ, սովորութային միջազգային իրավունքի հին նորմերը, որոնք արգելում էին 1) հակառակորդի գույքի ոչնչացումը կամ բռնագրավումը, բացառությամբ այն դեպքերի, երբ նման ոչնչացումը կամ բռնագրավումը պարտադրաբար թելադրվում են ռազմական անհրաժեշտությամբ և 2) կողոպուտը, կիրառվում են ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումներում: Կողոպուտը՝ հակառակորդ կողմի սեփականատերեր համարվողներին բռնի կերպով իրենց ունեցվածքից զրկելն է և դրա յուրացումը մասնավոր կամ անձնական օգտագործման համար⁷⁴: Երկու արգելքն էլ չեն վերաբերում հակառակորդ կողմին պատկանող ռազմական ունեցվածքը որպես ռազմավար բռնագրավելու սովորական պրակտիկային:

Սովորութային միջազգային իրավունքի համաձայն, հրամանատար-

71 Տե՛ս Customary International Humanitarian Law, op.cit. (note 4), Vol. I, Rule 44:
72 Նույն տեղում, 33 կանոն:
73 Տե՛ս, օրինակ, International Military Tribunal at Nuremberg, Case of the Major War Criminals, Judgment, 1 October 1946, Official Documents, Vol. I, pp. 253-254:
74 Տե՛ս Միջազգային քրեական դատարան: Հանցագործությունների տարրեր: Պատերազմական հանցագործություն կոդիպուտի ձևով (Միջազգային քրեական դատարանի ստատուտի 8(2) (b)(xvi) և (e)(v) հոդված):

ները կարող են ոչ թշնամական փոխադարձ կոնտակտի մեջ մտնել միմյանց հետ՝ օգտագործելով կապի ցանկացած միջոցներ, բայց այդ կոնտակտները պետք է հիմնվեն բարեխղճության սկզբունքի վրա: Պրակտիկան վկայում է, որ նման շփումները կարող են իրականացվել բանագնացներ կոչվող միջնորդների միջոցով, կամ բազմաթիվ այլ եղանակներով, այդ թվում նաև հեռախոսով կամ ռադիոյով: Բանագնացը ընդհարման կողմերից մեկի ներկայացուցիչն է, որը լիազորված է կոնտակտի մեջ մտնել հակառակ կողմի հետ և այդ պատճառով անձեռնմխելի է: Որպես բանագնաց իրեն ներկայացնելու ավանդական եղանակը՝ սպիտակ դրոշով հանդես գալը, համարվեց ուժը պահպանած: Ի լրումն դրա, ճանաչված պրակտիկա դարձավ կոնտակտներին նպաստելու նպատակով ընդհարման մասնակիցների կողմից երրորդ կողմին դիմելը, օրինակ՝ հովանավորող տերությանը կամ անաչառ և չեզոք միջազգային կազմակերպությանը, որը գործում է որպես փոխանորդ, այդ թվում նաև ԿԽՄԿ-ին, միջազգային կազմակերպությանը կամ խաղաղարար ուժերին: Կուտակված պրակտիկայից ակնհայտ է դառնում, որ ինչպես միջազգային, այնպես էլ ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումներում բանակցությունների ժամանակ որպես միջնորդներ հանդես են եկել տարբեր հիմնարկություններ և կազմակերպություններ և դրա վերաբերյալ գոյություն է ունեցել ընդհանուր համաձայնություն: Բանագնացներին վերաբերող նորմերը սկզբնավորվել են Հաագայի կանոնակարգում և վաղուց արդեն սովորության են դարձել միջազգային զինված ընդհարումների համար: Վերջին կես դարում կուտակված պրակտիկան ցույց է տալիս, որ դրանք որպես սովորության են դիտարկվում նաև ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումներում⁷⁵:

Պրակտիկան մատնանշում է մշակութային արժեքների պաշտպանությունն ապահովող իրավական նորմերի երկու աղբյուր: Դրանցից մեկը Հաագայի կանոնակարգն է, որը պահանջում է, որպեսզի ռազմական գործողություններ իրականացնելիս հատուկ հոգատարություն ցույցաբերվի եկեղեցական, բարեգործական, կրթական, գեղարվեստական և գիտական հիմնարկություններին, ինչպես նաև պատմական հուշարձաններին վնաս չհասցնելու համար, եթե դրանք ռազմական օբյեկտներ չեն հանդիսանում: Հաագայի կանոնադրությունն արգելում է նաև նման հիմնարկությունների և հուշարձանների կանխատեսված զավթումը, ոչնչացումը կամ վնասումը: Այդ նորմերը, որոնք վաղուց ի վեր միջազգային զինված ընդհարումներում համարվում են որպես սովորության, ներկայումս ճանաչվում են սովորության նաև ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումներում:

Երկրորդ աղբյուրը Ձինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին 1954 թվականի Հաագայի կոնվենցիայի կոնկրետ դրույթներն են՝ Կոնվենցիա, որը վերաբերում է այն «արժեքներին, որոնք մեծ նշանակություն ունեն յուրաքանչյուր ժողովրդի մշակութային ժառանգության համար»: Այդ Կոնվենցիան հատուկ նշան ներմուծեց նման արժեքներն առանձնացնելու համար:

75 St'v Customary International Humanitarian Law, op. cit (note 4), Rules 67-69):

Ներկայումս սովորութային իրավունքն արգելում է նման արժեքները դարձնել հարձակման օբյեկտ և օգտագործել այնպիսի նպատակներով, որոնք կարող են հանգեցնել դրանց քայքայմանը կամ վնասմանը, եթե դա պարտադրաբար չի պահանջում ռազմական անհրաժեշտությունը:

Այն արգելում է նաև գողության, կողոպուտի կամ ցանկացած ձևով ապօրինի յուրացման, ինչպես նաև նշված արժեքների նկատմամբ վայրագ վերաբերմունքի ցանկացած ակտեր: Այդ արգելքները համապատասխանում են Հաագայի կոնվենցիայի դրույթներին և վկայում են մեծ նշանակություն ունեցող մշակութային արժեքների պաշտպանության ոլորտում պետական պրակտիկայի վրա Կոնվենցիայի ներգործության մասին:

Ձեռքերը

Չափազանց մեծ վնասներ և ավելորդ տառապանքներ պատճառող զենքի, ինչպես նաև իր բնույթով ոչ ընտրովի զենքի կիրառումն արգելող ընդհանուր սկզբունքները դասվել են սովորութայինների շարքը՝ ցանկացած տիպի ընդհարումների համար: Ի լրումն դրա, պետական պրակտիկայում, մեծամասամբ տվյալ սկզբունքների հիման վրա, հաստատվեց սովորութային միջազգային իրավունքի ամսացյալ արգելքը զենքի որոշակի տեսակների կիրառման (կամ կիրառման որոշ տեսակների) նկատմամբ՝ թույլների և թունավորված զենքի, կենսաբանական զենքի, քիմիական զենքի, անկարգությունները սանձելու միջոցների, որոնք օգտագործվում են որպես պատերազմ վարելու մեթոդ. հեռքիցիդների՝ որպես պատերազմ վարելու մեթոդ⁷⁶. դյուրությամբ ծավալվող և ճզմվող գնդակների. անձնակազմի դեմ պայթող գնդակների կիրառման. ցանկացած այնպիսի զենքի կիրառման, որի հիմնական գործողությունը բեկորների միջոցով վնաս հասցնելն է, որոնք մարդկանց մարմնում ռենտգենյան ճառագայթների օգնությամբ չեն հայտնաբերվում. ական-ծուղակների, որոնք ինչ-որ կերպ միացված են կամ զուգորդվում են միջազգային մարդասիրական իրավունքի համաձայն հատուկ պաշտպանության տակ գտնվող ունեցվածքի կամ անձանց հետ, ինչպես նաև այնպիսի առարկաների հետ, որոնք կարող են գրավել քաղաքացիական անձանց ուշադրությունը. լազերային զենքի, որը հատկապես նախատեսված է ռազմական գործողություններում օգտագործելու համար՝ բացառապես կամ այդ թվում այն նպատակով, որպեսզի մարդու տեսողության չպաշտպանված օրգաններին մնայուն կուրություն պատճառի:

76 Այդ կանոնը վկայակոչում է սովորութային միջազգային իրավունքի մի ամբողջ շարք այլ կանոններ, այն է՝ կենսաբանական և քիմիական զենքի արգելումը, բուսական ծածկույթին հարվածներ հասցնելու արգելքը, եթե վերջինս ռազմական օբյեկտների տեղակայման վայր չէ, այնպիսի հարձակումների արգելումը, որոնք, ինչպես կարելի է սպասել, քաղաքացիական բնակչությանը կպատճառեն կյանքի պատահական կորուստ, քաղաքացիական անձանց՝ վերքեր, քաղաքացիական օբյեկտներին՝ վնաս, կամ այդ ամենը միասին, և դա չափից ավելի կլինի այն կոնկրետ և անմիջական ռազմական առավելության համեմատ, որը նախատեսվում է ձեռք բերել, ինչպես նաև բնական միջավայրին լայնածավալ, երկարաժամկետ և լուրջ վնաս հասցնելու արգելքը: Տե՛ս նույն տեղում, 76 կանոն:

Չենքի որոշ տեսակներ, որոնք, որպես այդպիսին, արգելված չեն սովորության իրավունքով, այդուհանդերձ ենթարկվում են որոշ սահմանափակումների: դա վերաբերում է, օրինակ՝ հակահետևակային ականներին և հրկիզող զենքին:

Հատուկ միջոցներ պետք է ձեռնարկվեն վերգետնյա ականների ոչ ընտրովի գործողությունը նվազագույնի հասցնելու համար: Խոսքը, մասնավորապես, այն սկզբունքի մասին է, ըստ որի ընդհարման՝ վերգետնյա ականներ օգտագործող կողմը պետք է հնարավորինս գրանցի դրանց տեղակայման վայրերը: Ռազմական ակտիվ գործողությունների ավարտից հետո այդ կողմը պարտավոր է հեռացնել ականները կամ որևէ կերպ դրանք անվտանգ դարձնի քաղաքացիական բնակչության համար և կամ աջակցի ականագերծմանը:

Օտտավայի կոնվենցիան արդեն իսկ վավերացրել են 140 պետություններ և մոտ ապագայում դրանց թիվը կավելանա: Այնպես որ, պետությունների մեծ մասն այսուհետ կապված են հակահետևակային ականներ չօգտագործելու, չարտադրելու, չփոխանցելու և դրանց պաշարներ չկուտակելու պայմանագրային պարտավորությամբ: Թեև տվյալ արգելքը ներկայումս դեռևս չի դարձել սովորության միջազգային իրավունքի բաղկացուցիչ մասը, քանի որ գոյություն ունի Կոնվենցիային չմիացած պետությունների դրան հակասող բավականին ծավալուն պրակտիկա, այդուհանդերձ, գործնականորեն բոլոր պետությունները, այդ թվում նաև՝ Օտտավայի կոնվենցիային չմիացածները, որոնք հակահետևակային ականների անհապաղ արգելման կողմնակիցներ չեն, ընդունում են զենքի այդ տեսակի վերացման ուղղությամբ շարժվելու անհրաժեշտությունը:

Անձանց դեմ հրկիզող զենք կիրառելն արգելված է, բացառությամբ այն դեպքերի, երբ հակառակորդին շարքից հանելու համար չի կարող օգտագործվել ավելի թեթև վնասվածք պատճառող զենք: Բացի դրանից, դրա կիրառման ժամանակ ձեռնարկվում են նախազուշական հնարավոր բոլոր միջոցները, որպեսզի ամեն դեպքում քաղաքացիական բնակչության շրջանում պատահական գոհերի թիվը, քաղաքացիական անձանց վիրավորվելը և քաղաքացիական օբյեկտների վնասները հասցվեն նվազագույնի:

Այդ նորմերի մեծ մասը համապատասխանում են պայմանագրերի այն դրույթներին, որոնք ի սկզբանե կիրառվել են միայն միջազգային զինված ընդհարումներում: Հետագայում իրավիճակն սկսեց աստիճանաբար փոխվել, օրինակ՝ Որոշակի տեսակի սովորական զենքերի մասին կոնվենցիային կից II Արձանագրության՝ 1996 թվականի ուղղումների ընդունմամբ, որը կիրառվում է նաև ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումներում և 2001 թվականին՝ նույն Կոնվենցիայի ուղղումների ընդունմամբ, որը I-IV արձանագրությունների գործողությունը տարածեց ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումների վրա: Վերը թվարկված սովորության իրավունքով սահմանված արգելքներն ու սահմանափակումները գործում են ցանկացած զինված ընդհարումներում:

Երբ ԿԽՄԿ-ն ստացավ սովորության միջազգային մարդասիրական իրավունքի վերաբերյալ հետազոտություն իրականացնելու մանդատը, Միջազ-

գային դատարանը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի հարցմամբ խորհրդատվական եզրակացություն էր պատրաստում միջուկային զենքի կամ դրա կիրառման սպառնալիքի օրինականության վերաբերյալ: Այնպես որ ԿԽՄԿ-ն որոշեց ձեռնարկի մնալ տվյալ հարցի իր սեփական վերլուծության իրականացումից: Իր խորհրդատվական եզրակացությունում Միջազգային դատարանը հանգեց միասնական կարծիքի, որ «միջուկային զենքի կամ դրա կիրառման սպառնալիքը» նույնպես պետք է համատեղելի լինեն զինված ընդհարման ժամանակ կիրառվող միջազգային մարդասիրական իրավունքի պահանջների հետ, հատկապես՝ միջազգային մարդասիրական իրավունքի սկզբունքների և նորմերի պահանջների հետ»⁷⁷:

Այդ եզրակացությունը կարևոր է այն պատճառով, որ I Լրացուցիչ արձանագրության վերաբերյալ բանակցություններին շատ պետություններ մասնակցել են ելնելով այն ըմբռնումից, թե դրա գործողությունը չի տարածվելու միջուկային զենքի կիրառման վրա: Սակայն դատարանի կարծիքը նշանակում է, որ ռազմական գործողությունների վարմանը վերաբերող նորմերը և զենքի կիրառման ընդհանուր սկզբունքները գործում են նաև միջուկային զենքի կիրառման նկատմամբ: Ի կատարումն այդ սկզբունքների և նորմերի դատարանը եզրակացրեց, որ «միջուկային զենքի և դրա կիրառման սպառնալիքը ընդհանուր առմամբ կհակասեին միջազգային իրավունքի այն նորմերին, որոնք կիրառելի են զինված ընդհարումն առնալիս, մասնավորապես, մարդասիրական իրավունքի սկզբունքներին և նորմերին»⁷⁸:

Հիմնական երաշխիքներ

Հիմնական երաշխիքները տարածվում են ընդհարման կողմի իշխանության ներքո գտնվող բոլոր քաղաքացիական անձանց նկատմամբ, ովքեր չեն մասնակցում կամ դադարեցրել են իրենց անմիջական մասնակցությունը ռազմական գործողություններին, ինչպես նաև շարքից դուրս եկած անձանց նկատմամբ: Քանի որ հիմնական երաշխիքները ծածկում են մյուսները և կիրառվում են բոլոր անձանց նկատմամբ, ապա հետագոտությունում դրանք չեն ստորաբաժանվել անձանց տարբեր կատեգորիաների նկատմամբ կիրառվող առանձին նորմերի:

Այդ բոլոր հիմնական երաշխիքները հենվում են միջազգային մարդասիրական իրավունքի ամուր հիմքի վրա, որը կիրառվում է ինչպես միջազգային, այնպես էլ ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումներում: Հետագոտություն-

77 Միջազգային դատարանի՝ Միջուկային զենքով սպառնալու կամ այն կիրառելու օրինականության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություն, op.cit. (note 8), p.226:

78 Նույն տեղում. տե՛ս նաև United Nations General Assembly, 51st Session, First Committee, Statement by the International Committee of the Red Cross, UN Doc. A/C.1/51/PV.8, 18 October 1996, p. 10: ԿԽՄԿ-ի հայտարարությունը հրապարակվեց International Review of the Red Cross, No 316, 1997, pp. 118-119 («ԿԽՄԿ-ն գտնում է, որ դժվար է պատկերացնել, թե ինչպես կարող է միջուկային զենքի օգտագործումը համապատասխանել միջազգային իրավունքի նորմերին»):

նում հիմնական երաշխիքների հետ կապված նորմերի մեծ մասը տրված են մարդասիրական իրավունքի ավանդական ձևակերպումներով, քանի որ վերջիններս լավագույնս են արտացոլում համապատասխան սովորության նորմերի էությունը⁷⁹: Ընդ որում, որոշ կանոններ ձևակերպվել էին այնպես, որպեսզի արտացոլեն մանրամասնորեն ներկայացված մի ամբողջ շարք դրույթների էությունը, որոնք վերաբերում են որևէ կոնկրետ թեմայի, օրինակ՝ առանց վարձատրության հարկադիր աշխատանքում անօրինական ներգրավման արգելումը, բռնի անհայտացումները, կալանքի տակ անօրինական պահելը և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանք պահանջող նորմը⁸⁰:

Այնտեղ, որտեղ դա անհրաժեշտ է, հետազոտությունում, այդ թվում նաև հիմնական երաշխիքներին նվիրված բաժնում, ընդգրկվել է մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավունքի պրակտիկան: Դա արվում էր այն պատճառով, որ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավունքը շարունակվում է կիրառվել զինված ընդհարումների ժամանակ, ինչպես դա հստակորեն սահմանված է մարդու իրավունքների վերաբերյալ բուն պայմանագրերում: Ճիշտ է, արտակարգ իրավիճակներում թույլ են տրվում շեղումներ որոշ դրույթներից: Այն փաստը, որ մարդու իրավունքների իրավունքը շարունակում է կիրառվել զինված ընդհարումների ժամանակ, բազմաթիվ հաստատումներ է ստացել պետական պրակտիկայում, իրավապաշտպան կազմակերպությունների գործունեությունում և Միջազգային դատարանի որոշումներում⁸¹: Բոլորովին վերջերս Միջազգային դատարանն օկուպացված պաղեստինյան տարածքներում պատի կառույցման իրավական հետևանքների մասին իր եզրակացությունում հաստատեց, որ «մարդու իրավունքների կոնվենցիաներով տրամադրվող պաշտպանությունը զինված ընդհարման դեպքում չի դադարում» և որ «կան իրավունքներ, որոնք կարող են վերաբերվել բացառապես միջազգային մարդասիրական իրավունքի կամ մարդու իրավունքների իրավունքի իրավասության ոլորտին, սակայն կան և այնպիսիները, որոնց վրա տարածվում է միջազգային իրավունքի այդ գույգ ճյուղերի գործողությունը»⁸²:

79 անձինք և շարքից դուրս եկած անձինք, օգտվում են մարդասիրական վերաբերմունքից՝ առանց որևէ անբարենպաստ տարբերակման. սպանության արգելման. կտանքների, դաժան կամ անմարդկային վերաբերմունքի և մարդկային արժանապատվության անարգման, այդ թվում նաև վիրավորական կամ նվաստացնող վերաբերմունքի արգելման. մարմնական պատիժների արգելման. նշված անձանց ֆիզիկական հաշմոթյան, բժշկական և գիտական փորձերի ենթարկելու արգելման. բռնաբարության և սեռական բռնության ցանկացած ձևերի արգելման. ցանկացած ձևի ստրկության և ստրկավաճառության արգելման. պատանդներ վերցնելու արգելման. կենդանի վահաններ օգտագործելու արգելման. արդար դատաբանության երաշխիքը. կոլեկտիվ պատիժների արգելման. քաղաքացիական անձանց և շարքից դուրս եկած անձանց համոզմունքները և հավատալիքները հարգելու պահանջը: Տե՛ս Customary International Humanitarian Law, supra note 4, Vol. I, Rules 87-94, 96-67 և 100-104:

80 Նույն տեղում, 95, 98-99 և 105 կանոններ:

81 Տե՛ս նույն տեղում, 32 գլխի նախաբան, Հիմնական երաշխիքներ:

82 International Court of Justice, Legal Consequences of the Construction of a Wall in the Occupied Palestinian Territory, Advisory Opinion, 9 July 2004, § 106:

Ընդ որում, պետք է նշել, որ հետազոտությունում նպատակ չի դրվում գնահատել մարդու իրավունքների իրավունքի ոլորտի պրակտիկան, որը հետազոտությունում ներառվել է միջազգային մարդասիրական իրավունքի անալոգիկ սկզբունքների ամրագրման, ուժեղացման և պարզաբանման համար:

Իմպլեմենտացիա

Միջազգային մարդասիրական իրավունքի իմպլեմենտացիային վերաբերող մի շարք նորմեր դարձել են սովորութային մարդասիրական իրավունքի բաղկացուցիչ մասը: Մասնավորապես, ընդհարման յուրաքանչյուր կողմ պարտավոր է պահպանել և ապահովել իր ռազմական ուժերի, ինչպես նաև փաստորեն դրանց ցուցումներով կամ ղեկավարությամբ և վերահսկողությամբ գործող անձանց և խմբերի կողմից միջազգային մարդասիրական իրավունքի կիրառումը: Հետևապես, ընդհարման յուրաքանչյուր կողմ՝ ներառյալ ընդդիմադիր զինված խմբավորումները, պարտավոր է կազմակերպել իր զինված ուժերի նախապատրաստումը ըստ միջազգային մարդասիրական իրավունքի: Բացի ընդհանուր պարտականություններից գոյություն ունեն նաև առավել կոկրետ պլանի իմպլեմենտացիոն մեխանիզմներ, որոնք պարտադիր են պետությունների համար: Ավելի քիչ չափով է հասկանալի, թե որքանով են այդ մեխանիզմները փոխկապակցում նաև ընդդիմադիր զինված կազմավորումներին: Օրինակ, այն հրամանների և հրահանգների հրապարակման պարտականությունը, որոնք զինված ուժերին հրահանգում են պահպանել միջազգային մարդասիրական իրավունքը, միջազգային իրավունքով հստակորեն նախատեսված է պետությունների համար, բայց ոչ ընդդիմության զինված խմբերի համար: Նույնը վերաբերում է նաև պետությունների, այլ ոչ թե ընդդիմադիր զինված կազմավորումների համար սահմանված այն պարտականությանը, ըստ որի սեփական զինված ուժերում պետք է ունենալ իրավաբանական խորհրդատուների, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են խորհուրդներ տալ համապատասխան մակարդակի հրամանատարներին միջազգային մարդասիրական իրավունքի կիրառման հարցերի վերաբերյալ:

Այնուհետև, պետությունը պատասխանատվություն է կրում միջազգային մարդասիրական իրավունքի՝ իրեն վերագրվող խախտումների համար և պարտավոր է ամբողջությամբ փոխհատուցել դրանց հետևանքով առաջացած վնասները և կորուստները: Մինչդեռ պարզություն չկա այն հարցում, թե կրո՞ւմ են, արդյոք, մնանօրինակ պատասխանատվություն ընդդիմադիր զինված խմբավորումներն իրենց մասնակիցների կողմից թույլ տրված խախտումների համար, և թե ինչպիսի՞ն կարող են լինել մնան պատասխանատվության հետևանքները: Ինչպես վերը նշվեց, ընդդիմադիր զինված խմբերը պետք է պահպանեն միջազգային մարդասիրական իրավունքը և գտնվեն «պատասխանատու հրամանատարության ներքո»⁸³: Հետևաբար, կարելի է անդել, որ ընդդիմադիր զին-

83 II Լրացուցիչ արձանագրություն, 1 (1) հոդված:

ված խմբերը պատասխանատվություն են կրում իրենց կազմում ընդգրկված անձանց համար: Նման պատասխանատվության հետևանքները պարզ չեն: Այսպես, չկա որոշակիություն այն հարցում, թե որքանով են ընդդիմադիր խմբերը պարտավոր ամբողջությամբ փոխհատուցել պատճառած վնասը, թեև շատ երկրներում տուժածները կարող են ներկայացնել քաղաքացիական հայց վնասը պատճառողների կողմից փոխհատուցում ստանալու վերաբերյալ:

Ինչ վերաբերում է անձնական քրեական պատասխանատվությանը, ապա սովորության միջազգային մարդասիրական իրավունքն այն նախատեսում է բոլոր այն անձանց համար, ովքեր պատերազմական հանցագործություններ են կատարում, հրամայում են կատարել դրանք կամ որևէ այլ կերպ պատասխանատվություն են կրում դրանց համար՝ որպես հրամանատարներ կամ պետեր: Պատերազմական հանցագործությունների իմպլեմենտացիայի ռեժիմը, այսինքն՝ դրանց հետաքննությունը և կասկածյալների դատական հետապնդումը պետությունների պարտականությունն է, որոնք կարող են դրանք փոխանցել՝ այդ նպատակներով կազմելով միջազգային կամ խառը տրիբունալներ:

Եզրակացություն

Հետազոտության խնդիրը չէր կայանում նրանում, որ բացահայտվի միջազգային մարդասիրական իրավունքի յուրաքանչյուր պայմանագրային նորմի սովորության բնույթը, այլ նրանում, որ առկա հիմնախնդիրների վերլուծության միջոցով որոշել, թե սովորության միջազգային իրավունքի որ նորմերը կարող են բխեցվել պետական պրակտիկայից մակաժողովրդային* միջոցով: Սակայն հետազոտության որոշ եզրահանգումների թռուցիկ դիտարկումը ցույց է տալիս, որ պայմանագրային իրավունքում բովանդակվող սկզբունքներն ու նորմերը լայն ճանաչում են գտել պրակտիկայում և ուժեղ ազդեցություն գործել սովորության միջազգային իրավունքի ձևավորման վրա: Դառնալով վերջինիս բաղկացուցիչ մասը, դրանք փոխկապակցում են բոլոր պետությունները՝ անկախ նրանից, թե վավերացրել են նրանք համապատասխան պայմանագրերը, թե՛ ոչ, և ընդդիմադիր զինված խմբերը՝ եթե խոսքը ոչ միջազգային բնույթի զինված ընդհարման բոլոր կողմերի նկատմամբ կիրառելի նորմերի մասին է:

Հետազոտությունը ցույց է տալիս նաև, որ սովորության միջազգային իրավունքի շատ նորմեր կիրառվում են ինչպես միջազգային, այնպես էլ ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումներում: Այն պատկերացում է տալիս, թե որքանով է պետական պրակտիկան առաջ անցել գոյություն ունեցող պայմանագրային իրավունքից և ընդարձակել ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումներում կիրառվող նորմերի գործողության ոլորտը: Արդյունքում, ռազմական գործողությունների և անձանց հետ վարվելակերպի կանոնակարգումը ներքին զինված ընդհարումներում դարձավ առավել ամբողջական և մանրա-

* Ինդուկցիա (թարգմանչի կողմից):

մասն, քան այն, որը ներկայացված է պայմանագրային իրավունքում: Մնում է որոշել, թե մարդասիրական և ռազմական տեսանկյուններից կարող է արդյոք բավարար համարվել այդ առավել ամբողջական և մանրամասն կանոնակարգումը, թե պահանջում է հետագա զարգացում:

Ինչպես և պայմանագրային իրավունքի դեպքում, սովորութային միջազգային մարդասիրական իրավունքի գործնական իմպլեմենտացիան պետք է իրականացվի գիտելիքների տարածման, ուսուցման և իրավակիրառման միջոցով: Այդ նորմերը պետք է ներառվեն ռազմական հրահանգներում և ազգային օրենսդրությունում՝ այնտեղ, որտեղ դա դեռևս չի արվել:

Բացի դրանից, հետազոտությունը բացահայտում է այն ոլորտները, որոնցում իրավունքը պարզաբանման կարիք ունի և այն պահերը, որոնք կարող են հետագա պարզաբանման, օրինակ՝ քաղաքացիական անձանց բնորոշումը ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումներում, ռազմական գործողություններին անմիջական մասնակցության հասկացությունը, ինչպես նաև համաչափության սկզբունքի ծավալը և կիրառումը:

Ներկայիս ձեռքբերումների լույսի ներքո և հաշվի առնելով այն աշխատանքը, որը դեռևս առջևում է, սույն հետազոտությունը պետք է դիտարկել ոչ թե որպես եզրափակում, այլ նոր գործընթացի սկիզբ, որը նպատակաուղղված է միջազգային մարդասիրական իրավունքի սկզբունքների և նորմերի ավելի խոր ըմբռնմանը և այդ բնագավառում համաձայնության հաստատմանը: Այդ գործընթացի շրջանակներում իրականացված հետազոտությունը կարող է հիմք դառնալ իմպլեմենտացիայի հարյերով առավել բովանդակալից բանավեճ և երկխոսություն ծավալելու, իրավունքի պարզաբանման և, հնարավոր է, իրավունքի զարգացման համար:

Հավելված

Միջազգային մարդասիրական իրավունքի սովորության նորմերի ցանկ

Սույն ցանկը կազմված է սովորության միջազգային մարդասիրական իրավունքին նվիրված հետազոտության առաջին հատորում ձևակերպված եզրահանգումների հիման վրա: Քանի որ հետազոտությունում խնդիր չի դրվել բացահայտել միջազգային մարդասիրական իրավունքի յուրաքանչյուր պայմանագրային նորմի սովորության բնույթը, ապա այն պարտադիր կերպով չի համընկնում գոյություն ունեցող պայմանագրերի կառուցվածքին: Նորմերի կիրառման ոլորտը նշված է քառակուսի փակագծերում: ՄՁԸ հապավումը նշում է այն սովորության նորմերը, որ կիրառվում են միջազգային բնույթի զինված ընդհարումներում, իսկ ՈՄՁԸ հապավումը՝ ոչ միջազգային զինված ընդհարումներում գործող նորմերը: Վերջին դեպքում որոշ նորմերի վերաբերյալ նշվում է, որ դրանց կիրառումը «հավանական է» քանի որ համապատասխան պրակտիկան առկա է, բայց դրա ծավալն անբավարար է:

Տարբերակման սկզբունքը

Քաղաքացիական անձանց և կոմբատանտների տարբերությունը

Կանոն 1. Ընդհարման կողմերը ցանկացած պարագայում պետք է տարբերակեն քաղաքացիական անձանց և կոմբատանտներին: Հարձակումները կարող են ուղղված լինել միայն կոմբատանտների դեմ: Հարձակումները չեն կարող ուղղված լինել քաղաքացիական անձանց դեմ [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 2. Բռնության կամ բռնության սպառնալիքի ակտերը, որոնց հիմնական նպատակը քաղաքացիական բնակչության ահաբեկումն է, արգելված են [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 3. Ընդհարման կողմի զինված ուժերի անձնակազմում ընդգրկված բոլոր անձինք կոմբատանտներ են՝ բացառությամբ բժշկական և հոգևոր անձնակազմի [ՄՁԸ]:

Կանոն 4. Ընդհարման մեջ գտնվող կողմի զինված ուժերը կազմված են բոլոր կազմակերպված զինված ուժերից, խմբերից և ստորաբաժանումներից, որոնք գտնվում են այն անձի հրամանատարության ներքո, որն այդ կողմի առջև պատասխանատու է իր ենթակայների վարքագծի համար [ՄՁԸ]:

Կանոն 5. Քաղաքացիական անձինք այն անձինքն են, որոնք ընդգրկված չեն զինված ուժերի կազմում: Քաղաքացիական բնակչությունը կազմված է քաղաքացիական անձինք հանդիսացող բոլոր անձանցից [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 6. Քաղաքացիական անձինք օգտվում են հարձակումներից պաշտպանված լինելու իրավունքից, բացառությամբ այն դեպքերի, երբ և քանի դեռ անմիջականորեն մասնակցում են ռազմական գործողություններին [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Քաղաքացիական օբյեկտների և ռազմական օբյեկտների փարբուրությունը

Կանոն 7. Ընդհարման մեջ գտնվող կողմերը, պետք է ցանկացած պարագայում տարբերակեն քաղաքացիական և ռազմական օբյեկտները: Հարձակումները կարող են ուղղված լինել միայն ռազմական օբյեկտների դեմ: Հարձակումները չեն կարող ուղղված լինել քաղաքացիական օբյեկտների դեմ [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 8. Ինչ վերաբերում է օբյեկտներին, ապա ռազմական օբյեկտները սահմանափակվում են նրանցով, որոնք իրենց բնույթով, տեղաբաշխմամբ, նշանակությամբ կամ օգտագործմամբ արդյունավետ ներդրում են իրականացնում ռազմական գործողություններում և լրիվ կամ մասնակի ավերածություններում, որոնց գրավումը կամ չեզոքացումը տվյալ պահին առկա հանգամանքներում բացահայտ ռազմական գերակշռություն է տալիս [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 9. Քաղաքացիական օբյեկտներ են բոլոր այն օբյեկտները, որոնք ռազմական օբյեկտներ չեն [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 10. Քաղաքացիական օբյեկտներն օգտվում են հարձակումից պաշտպանված լինելու իրավունքից, բացառությամբ այն դեպքերի և այն ժամանակահատվածի, երբ վերածվում են ռազմական օբյեկտների [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Ոչ ընտրովի բնույթի հարձակումներ

Կանոն 11. Ոչ ընտրովի բնույթի հարձակումներն արգելված են [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 12. Ոչ ընտրովի հարձակումների թվին պատկանում են՝

- a) հարձակումներ, որոնք ուղղված չեն կոնկրետ ռազմական օբյեկտների դեմ.
- b) հարձակումներ, որոնց ընթացքում կիրառվում են ռազմական գործողությունների վարման այնպիսի մեթոդներ կամ միջոցներ, որոնք չեն կարող ուղղվել կոնկրետ ռազմական օբյեկտների դեմ, կամ
- c) հարձակումներ, որոնց ընթացքում կիրառվում են ռազմական գործողությունների վարման այնպիսի մեթոդներ կամ միջոցներ, որոնց հետևանքերը չեն կարող սահմանափակվել, ինչպես պահանջում է միջազգային մարդասիրական իրավունքը և որոնք, այդպիսով, յուրաքանչյուր նման դեպքում խոցում են ռազմական օբյեկտներն ու քաղաքացիական անձանց կամ քաղաքացիական օբյեկտներն առանց տարբերակման [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 13. Արգելված են հարձակումները՝ ոմբակոծելու ցանկացած մեթոդներով կամ միջոցներով, որոնց ընթացքում որպես միասնական ռազմական օբյեկտ են դիտարկում բացահայտորեն միմյանցից հեռու գտնվող և նշմարվող ռազմական օբյեկտների շարքը, որը գտնվում է քաղաքում, գյուղում կամ մեկ այլ շրջանում, որտեղ կենտրոնացված են քաղաքացիական անձինք կամ քաղաքացիական օբյեկտները [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Հարձակման ժամանակ համաչափության սկզբունքի պահպանումը

Կանոն 14. Արգելված են այն հարձակումները, որոնք, ինչպես կարելի է սպասել, զուգահեռաբար կհանգեցնեն քաղաքացիական բնակչության շրջանում կյանքի կորստյան, քաղաքացիական անձանց վիրավորվելուն և քաղաքացիական օբյեկտների վնասվելուն կամ այդ ամենը միասին վերցրած, որոնք կարող են չափից ավելի լինել, կոնկրետ և անմիջական ռազմական այն առավելության նկատմամբ, որը նախատեսվում է այդ ամենի արդյունքում ստանալ [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Նախազգուշական միջոցները հարձակման ժամանակ

Կանոն 15. Ռազմական գործողություններ իրականացնելիս պետք է մշտապես հոգատարություն դրսևորվի, որպեսզի խնայվեն քաղաքացիական բնակչությունը, քաղաքացիական անձինք և քաղաքացիական օբյեկտները: Պետք է ձեռնարկվեն նախազգուշական բոլոր հնարավոր միջոցները՝ խուսափելու համար քաղաքացիական բնակչության շրջանում կյանքի կորստից, քաղաքացիական անձանց վիրավորվելուց և քաղաքացիական օբյեկտների պատահական վնասվելուց կամ, համենայն դեպս, դրանք նվազագույնի հասցնելու համար [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 16. Ընդհարման մեջ գտնվող յուրաքանչյուր կողմ պետք է անի հնարավորը՝ հավաստիանալու համար, որ հարձակման օբյեկտները ռազմական են [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 17. Ընդհարման մեջ գտնվող յուրաքանչյուր կողմ, պատերազմի վարման միջոցներն ու մեթոդները ընտրելիս, պետք է ձեռնարկի նախազգուշական բոլոր հնարավոր միջոցները՝ խուսափելու համար քաղաքացիական բնակչության շրջանում պատահական կորուստներից, քաղաքացիական անձանց պատահական վիրավորվելուց և քաղաքացիական օբյեկտների պատահական վնասվելուց կամ, համենայն դեպս, դրանք նվազագույնի հասցնելու համար [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 18. Ընդհարման մեջ գտնվող յուրաքանչյուր կողմ պետք է անի բոլոր հնարավորը՝ որոշելու համար, թե կարելի^օ է արդյոք սպասել, որ հարձակումը կհանգեցնի քաղաքացիական բնակչության շրջանում պատահական կորուստների, քաղաքացիական անձանց պատահական վիրավորվելուն կամ քաղաքացիական օբյեկտների պատահական վնասվելուն, կամ այդ ամենը միասին վերցրած, որոնք չափից ավելի կլինեն կոնկրետ և ուղղակի այն ենթադրյալ ռազմական առավելության նկատմամբ, որը նախատեսվում է ստանալ [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 19. Ընդհարման մեջ գտնվող յուրաքանչյուր կողմ պետք է անի հնարավորը՝ հարձակումը չեղյալ անելու կամ կասեցնելու համար, եթե ակնհայտ է դառնում, որ օբյեկտը ռազմական չէ, և հարձակումը, ինչպես կա-

րելի է սպասել, կհանգեցնի քաղաքացիական բնակչության շրջանում կյանքի պատահական կորուստների, քաղաքացիական անձանց պատահական վիրավորվելուն, քաղաքացիական օբյեկտների պատահական վնասվելուն կամ այդ ամենը միասին վերցրած, ինչը չափից ավելի կլինի ռազմական այն ենթադրյալ կոնկրետ և անմիջական առավելության նկատմամբ, որը նախատեսվում է ստանալ [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 20. Ընդհարման մեջ գտնվող յուրաքանչյուր կողմ պետք է կանխապես արդյունավետ նախազգուշացում կատարի հարձակումների մասին, որոնք կարող են շոշափել քաղաքացիական բնակչությանը, բացառությամբ այն դեպքերի, երբ հանգամանքները թույլ չեն տալիս դա անել [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 21. Երբ համարժեք ռազմական առավելություն ստանալու համար հնարավոր է ընտրություն կատարել մի քանի ռազմական օբյեկտների միջև, պետք է ընտրվի այն օբյեկտը, որը հարձակման ենթարկելիս, ինչպես կարելի է սպասել, կստեղծի նվազագույն վտանգ քաղաքացիական անձանց կյանքի և քաղաքացիական օբյեկտների համար [ՄՁԸ/ հնարավոր է, ՈՄՁԸ]:

Հարձակումների հետևանքների նկատմամբ
նախազգուշական միջոցները

Կանոն 22. Ընդհարման մեջ գտնվող կողմերը, պետք է ձեռնարկեն բոլոր հնարավոր նախազգուշական միջոցներն իրենց վերահսկողության ներքո գտնվող քաղաքացիական բնակչությանը և քաղաքացիական օբյեկտները հարձակումների հետևանքներից պաշտպանելու համար [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 23. Ընդհարման մեջ գտնվող յուրաքանչյուր կողմ, առավելագույն գործնականորեն հնարավոր չափով պետք է խուսափի խիտ բնակեցված շրջաններում կամ դրանց մերձակայքում ռազմական օբյեկտներ տեղադրելուց [ՄՁԸ/ հնարավոր է, ՈՄՁԸ]:

Կանոն 24. Ընդհարման մեջ գտնվող յուրաքանչյուր կողմ, առավելագույն գործնականորեն հնարավոր չափով քաղաքացիական անձանց և օբյեկտները պետք է հեռացնի իր վերահսկողության ներքո գտնվող շրջաններից, որ տեղակայված են ռազմական օբյեկտների հարևանությամբ [ՄՁԸ/ հնարավոր է, ՈՄՁԸ]:

Վատուկ պաշտպանությունից օգտվող անձինք և օբյեկտներ

Բուժանձնակազմ, հոգևորականներ, բժշկական
և կրոնական օբյեկտներ

Կանոն 25. Բացառապես բժշկական պարտականություններ կատարելու համար նախատեսված բուժանձնակազմը պետք է հարգանք վայելի և պաշտպանվի ցանկացած հանգամանքներում: Դրան պատկանող անձինք կորցնում են պաշտպանության իրավունքը, եթե բացի իրենց մարդասիրական պարտականություններից, կատարում են նաև հակառակորդի դեմ ուղղված գործողություններ [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 26. Արգելվում է որևէ մեկին պատժել բժշկական էթիկային համահունչ բժշկական պարտականությունները կատարելու համար և բժշկական գործառույթներ կատարող անձանց հարկադրել բժշկական էթիկայի նորմերին հակասող գործողությունների կատարման [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 27. Բացառապես հոգևոր գործառույթների կատարման համար նախատեսված հոգևոր անձնակազմը ցանկացած հանգամանքներում պետք է վայելի հարգանք և օգտվի պաշտպանությունից: Դրան պատկանող անձինք կորցնում են պաշտպանության իրավունքը, եթե բացի իրենց մարդասիրական պարտականություններից, կատարում են նաև հակառակորդի դեմ ուղղված գործողություններ [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 28. Բացառապես բուժնպատակների համար նախատեսված բուժմիավորումները ցանկացած հանգամանքներում պետք է վայելեն հարգանք և օգտվեն պաշտպանության իրավունքից: Նրանք կորցնում են պաշտպանության իրավունքը, եթե բացի իրենց մարդասիրական գործառույթներից, օգտագործվում են նաև հակառակորդին վնաս հասցնող գործողություններում [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 29. Բացառապես սանիտարական փոխադրումների համար նախատեսված սանիտարափոխադրամիջոցները ցանկացած հանգամանքներում պետք է վայելեն հարգանք և օգտվեն պաշտպանության իրավունքից: Նրանք կորցնում են պաշտպանության իրավունքը, եթե բացի իրենց մարդասիրական գործառույթներից օգտագործվում են նաև հակառակորդին վնաս հասցնող գործողություններում [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 30. Արգելված են հարձակումները՝ ուղղված են բժշկական և հոգևոր անձնակազմի և այն օբյեկտների դեմ, որոնք միջազգային իրավունքին համապատասխան օգտագործում են Ժնևի կոնվենցիաներով նախատեսված տարբերանշանները [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Մարդասիրական օգնություն ցույց տվող
կազմակերպությունների անձնակազմը և օբյեկտները

Կանոն 31. Մարդասիրական օգնություն ցույց տվող կազմակերպությունների անձնակազմը պետք է վայելի հարգանք և օգտվի պաշտպանության իրավունքից [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 32. Մարդասիրական օգնություն ցույց տալու համար օգտագործվող օբյեկտները պետք է վայելեն հարգանք և օգտվեն պաշտպանության իրավունքից [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Խաղաղության պահպանման առաքելությունում *որժող անձնակազմը և օբյեկտները

Կանոն 33. Արգելվում է հարձակումներ կատարել խաղաղության պահպանման առաքելությունում՝ Միավորված ազգերի կազմակերպության Կա-

նոնդրությանը համապատասխան գործող անձնակազմի և օբյեկտների վրա, քանի դեռ դրանք ունեն պաշտպանության այն իրավունքը, որից օգտվում են քաղաքացիական անձինք կամ քաղաքացիական օբյեկտները՝ միջազգային մարդասիրական իրավունքին համապատասխան [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Լրագրողներ

Կանոն 34. Ձինված ընդհարման շրջաններում մասնագիտական գործուղումների մեջ գտնվող լրագրողները պետք է վայելեն հարգանք և օգտվեն պաշտպանության իրավունքից, քանի դեռ անմիջականորեն չեն մասնակցում ռազմական գործողություններին [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Պաշտպանության ներքո գտնվող գոտիները

Կանոն 35. Արգելվում են հարձակումներն այն գոտիների վրա, որոնք ստեղծված են վիրավորներին, հիվանդներին և քաղաքացիական անձանց ռազմական գործողություններից պատասպարելու համար [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 36. Արգելված են հարձակումները ընդհարման կողմերի համաձայնությամբ ստեղծված ապառազմականացված գոտիների վրա [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 37. Հարձակումները չպաշտպանվող տեղանքի վրա արգելված են [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Մշակութային արժեքները

Կանոն 38. Ընդհարման մեջ գտնվող յուրաքանչյուր կողմ պետք է հարգի մշակութային արժեքները:

- A. Ռազմական գործողությունների ժամանակ պետք է հատուկ հոգատարություն ցուցաբերվի՝ խուսափելու համար կրոնական, արվեստի, գիտության, կրթության կամ բարեգործական նպատակների համար նախատեսված շինությունները, ինչպես նաև պատմական հուշարձաններին վնաս պատճառելուց, եթե դրանք ռազմական օբյեկտներ չեն:
- B. Յուրաքանչյուր ժողովրդի մշակութային ժառանգության համար մեծ նշանակություն ունեցող արժեքները չպետք է դառնան հարձակման օբյեկտ, բացառությամբ այն դեպքերի, երբ դա պահանջում է հրատապ ռազմական անհրաժեշտությունը [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 39. Յուրաքանչյուր ժողովրդի մշակութային ժառանգության համար մեծ նշանակություն ունեցող արժեքներն արգելվում է օգտագործել այնպիսի նպատակներով, որոնք կարող են հանգեցնել այդ արժեքների ավերմանը կամ վնասմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա պահանջում է հրատապ ռազմական անհրաժեշտությունը [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 40. Ընդհարման մեջ գտնվող յուրաքանչյուր կողմ պետք է պաշտպանի մշակութային արժեքները:

- A. Արգելված են կրոնական, բարեգործական, կրթական, գեղարվեստական և գիտական հիմնարկների, պատմական հուշարձանների, արվեստի և գիտության ստեղծագործությունների զավթումը, ոչնչացումը կամ դիտավորությամբ վնասելը:
- B. Արգելված են յուրաքանչյուր ժողովրդի մշակութային ժառանգության համար մեծ նշանակություն ունեցող մշակութային արժեքների հափշտակման, կողոպուտի կամ ցանկացած ձևով անօրինական յուրացման, ինչպես նաև այդ արժեքների նկատմամբ վայրագ վերաբերմունքի ցանկացած ակտերը [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 41. Օկուպացնող տերությունը պետք է կանխի մշակութային արժեքների դուրս բերումն օկուպացված տարածքից և վերադարձնի ապօրինաբար դուրս բերված մշակութային արժեքներն օկուպացված տարածքի իրավասու իշխանություններին [ՄՁԸ]:

Վերանգավոր ուժեր պարունակող կայանքներ և կառույցներ

Կանոն 42. Եթե հարձակում է կատարվում վտանգավոր ուժեր պարունակող կայանքների և կառույցների, այն է՝ ամբարտակների, պատվարների և ատոմային էլեկտրակայանների, ինչպես նաև դրանցում կամ մերձակայքում գտնվող այլ կառույցների վրա, անհրաժեշտ է հատուկ հոգատարություն ցուցաբերել՝ խուսափելու համար վտանգավոր ուժերի արձակումից և քաղաքացիական բնակչության շրջանում հետագա ծանր կորուստներից [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Շրջակա միջավայրը

Կանոն 43. Ռազմական գործողությունների վարման ընդհանուր սկզբունքները կիրառվում են նաև շրջակա միջավայրի նկատմամբ:

- A. Շրջակա միջավայրի և ոչ մի հատված չի կարող դառնալ հարձակման օբյեկտ, բացառությամբ այն դեպքերի, երբ այն ռազմական օբյեկտ է հանդիսանում:
- B. Արգելված է շրջակա միջավայրի ցանկացած հատվածի ոչնչացում, եթե դա թելադրված չէ հրատապ ռազմական անհրաժեշտությամբ:
- C. Արգելված են ռազմական օբյեկտի վրա հարձակումները, եթե դրանք, ինչպես կարելի է սպասել, զուգահեռաբար կառաջացնեն շրջակա միջավայրի այնպիսի վնաս, որը չափից ավելի է սպասվող կոնկրետ և անմիջական ռազմական առավելության համեմատ [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 44. Պատերազմի վարման մեթոդներն ու միջոցներն օգտագործելիս պետք է պատշաճ կերպով հաշվի առնվի շրջակա միջավայրի պաշտպանությունն ու պահպանումը: Ռազմական գործողություններ իրականացնելիս պետք է ձեռնարկվեն նախազգուշական բոլոր հնարավոր միջոցները՝ խուսափելու համար շրջակա միջավայրը պատահական վնասելուց կամ, համեմայն դեպս, այդ վնասը հասցնելու նվազագույնի: Շրջակա միջավայրի համար որոշ ռազմական գործողությունների հետևանքների վերաբերյալ ստույգ գիտելիքներ-

րի բացակայությունը ընդհարման կողմին չի ազատում նախագուշական միջոցների ձեռնարկումից [ՄՁԸ/ հնարավոր է, ՈՄՁԸ]:

Կանոն 45. Արգելված է օգտագործել պատերազմի վարման այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնք նպատակ ունեն շրջակա միջավայրին պատճառել կամ ինչպես կարելի է սպասել, կպատճառեն լայնածավալ, երկարաժամկետ և լուրջ վնաս: Արգելված է շրջակա միջավայրի ոչնչացումն օգտագործել որպես գեներ [ՄՁԸ/հնարավոր է, ՈՄՁԸ]:

Պատերազմի վարման կոնկրետ մեթոդները

Գթուրթյան մերժումը

Կանոն 46. Արգելված է ոչ մեկին ողջ չթողնելու մասին հրաման արձակելը, հակառակորդին դրանով սպառնալը կամ ռազմական գործողություններ դրա հիման վրա վարելը [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 47. Արգելված է շարքից դուրս եկած ճանաչված անձանց վրա հարձակվելը: Շարքից դուրս եկած է համարվում այն անձը, որը՝

- a) գտնվում է հակառակ կողմի իշխանության ներքո.
- b) ի վիճակի չէ պաշտպանվել, քանի որ գտնվում է անգիտակից վիճակում, ենթարկվել է նավաբեկության կամ վիրավոր կամ հիվանդ լինելու պատճառով.
- c) պարզորոշ կերպով արտահայտում է գերի հանձնվելու մտադրություն, պայմանով, որ այդ անձը ձեռնպահ է մնում թշնամական գործողություններից և չի փորձում դիմել փախուստի [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 48. Արգելված է հարձակվել այն անձանց վրա, ովքեր անկարգելով* (պարաշյուտով) հեռանում են աղետի ենթարկված թռչող սարքից՝ նրանց վայրէջքի ամբողջ ընթացքում [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Գույքի ոչնչացումը և բռնագրավումը

Կանոն 49. Ընդհարման մեջ գտնվող կողմերը կարող են որպես ռազմավար բռնագրավել հակառակ կողմին պատկանող ռազմական սարքավորումները [ՄՁԸ]:

Կանոն 50. Արգելված է հակառակորդի գույքի ոչնչացումը և բռնագրավումը, եթե դա չի պահանջում հրատապ ռազմական անհրաժեշտությունը [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 51. Օկուպացված տարածքում.

- a) շարժական հանրային սեփականությունը, որը կարելի է օգտագործել ռազմական գործողությունների համար, կարող է բռնագրավվել:
- b) անշարժ հանրային սեփականությունը պետք է կառավարվի ուզուֆ-րուկտի** կանոններին համապատասխան. և

* Պարաշյուտով (թարգմանչի կողմից):
 ** Ususfructus. ցմահ օգտվել այլոց ունեցվածքից և դրա բերած եկամուտներից՝ ունեցվածքի ամբողջականությունը և տնտեսական նշանակությունը պահպանելու պայմանով (թարգմանչ-

с) մասնավոր սեփականությունը պետք է հարգվի և չի կարող բռնագրավվել՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նման սեփականության բռնագրավումը թելադրված է հրատապ ռազմական անհրաժեշտությամբ [ՄՁԸ]:

Կանոն 52. Կողոպուտն արգելված է [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Քաղաքացիական բնակչության շրջանում սովահարության օգտագործումը և մարդասիրական օգնության մարչելիությունը

Կանոն 53. Արգելվում է քաղաքացիական բնակչության շրջանում սովահարությունն օգտագործել որպես պատերազմի վարման մեթոդ [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 54. Արգելված է ենթարկել հարձակման, ոչնչացնել, դուրս բերել կամ փչացնել քաղաքացիական բնակչության գոյատևման համար անհրաժեշտ օբյեկտները [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 55. Ընդհարման կողմերը պետք է թույլատրեն կարիքավոր քաղաքացիական անձանց համար նախատեսված մարդասիրական օգնության արագ և անարգել փոխադրումը և աջակցել դրան՝ պայմանով, որ նման մարդասիրական օգնությունն անկողմնակալ բնույթ է կրում և ցուցաբերվում է առանց որևէ անբարենպաստ տարբերակման. ընդ որում, ընդհարման կողմերն իրավունք ունեն վերահսկել այն [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 56. Ընդհարման մեջ գտնվող կողմերը պետք է ապահովեն այն լիազոր անձնակազմի տեղաշարժման ազատությունը, որը մասնակցում է օգնություն ցույց տալու գործողություններին, որն անհրաժեշտ է նրա գործառույթները կատարելու համար: Միայն հրատապ ռազմական անհրաժեշտության դեպքում նրա տեղափոխությունները կարող են ժամանակավորապես սահմանափակվել [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Խաբեություն

Կանոն 57. Ռ-ազմական խորամանկությունները չեն արգելվում, քանի դեռ դրանք չեն խախտում միջազգային մարդասիրական իրավունքի նորմը [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 58. Զինադադարի սպիտակ դրոշի ոչ պատշաճ օգտագործումն արգելված է [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 59. Ժնկի կոմվենցիաներում մատնանշված տարբերանշանների ոչ պատշաճ օգտագործումն արգելված է [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 60. Արգելված է օգտագործել Միավորված ազգերի կազմակերպության խորհրդանշանը և համազգեստը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա թույլատրել է այդ Կազմակերպությունը [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 61. Միջազգայնորեն ճանաչված այլ խորհրդանշանների ոչ պատշաճ օգտագործումն արգելված է [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 62. Արգելվում է օգտագործել հակառակորդ կողմի դրոշները, ռազմական խորհրդանշանները, զինվորական տարբերանշանները կամ համազգեստը [ՄՁԸ/հնարավոր է, ՈՄՁԸ]:

Կանոն 63. Արգելվում է օգտագործել չեզոք պետությունների կամ ընդհարման կողմ չհանդիսացող այլ պետությունների դրոշները, ռազմական խորհրդանշանները, զինվորական տարբերանշանները կամ համազգեստը [ՄՁԸ/հնարավոր է, ՈՄՁԸ]:

Կանոն 64. Արգելվում է համաձայնություն կնքել ռազմական գործողությունների ժամանակավոր դադարեցման մասին՝ մտադրություն ունենալով անսպասելիորեն հարձակվել հակառակորդի վրա, որն իրեն ապահովված է համարում այդ համաձայնությամբ [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 65. Արգելվում է հակառակորդին սպանել, վիրավորել կամ գերի վերցնել՝ դիմելով նենգության [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Բանակցություններ հակառակորդի հետ

Կանոն 66. Հրամանատարները թշնամական բնույթ չկրող բանակցություններ կարող են վարել կապի ցանկացած միջոցի օգնությամբ: Նման բանակցությունները պետք է հիմնվեն բարեխիղճ վերաբերմունքի վրա [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 67. Բանագնացներն անձեռնմխելի են [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 68. Հրամանատարները կարող են ձեռնարկել նախազգուշական անհրաժեշտ միջոցներ՝ կանխելու համար այն վնասը, որը կարող է հասցնել բանագնացի ներկայությունը [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 69. Բանագնացները, որոնք օգտվում են իրենց արտոնյալ վիճակից՝ միջազգային իրավունքին հակասող և հակառակորդ կողմին վնաս հասցնող գործողություններ կատարելու համար, կորցնում են անձեռնմխելիության իրավունքը [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Ձեռքերը

Ձեռքի օգտագործման ընդհանուր սկզբունքները

Կանոն 70. Արգելվում է օգտագործել պատերազմ վարելու այնպիսի միջոցներ և մեթոդներ, որոնք կարող են չափազանց մեծ վնասներ հասցնել կամ ավելորդ տառապանքներ պատճառել [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 71. Արգելվում է օգտագործել ոչ ընտրովի գործողության գեներներ [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Թույլներ

Կանոն 72. Թույլի կամ թունավորված զենքի օգտագործումն արգելված է [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կենսաբանական զենքեր

Կանոն 73. Կենսաբանական զենքի օգտագործումն արգելված է [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Քիմիական զենքեր

Կանոն 74. Քիմիական զենքի օգտագործումն արգելված է [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 75. Արգելվում է անկարգությունների դեմ պայքարի համար նախատեսված նյութերն օգտագործել որպես պատերազմ վարելու մեթոդ [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 76. Հերթիցիդների օգտագործումը որպես պատերազմ վարելու մեթոդ արգելված է, եթե՝

- a) դրանք, ըստ էության, հանդիսանում են արգելված քիմիական զենք.
- b) դրանք, ըստ էության, հանդիսանում են արգելված կենսաբանական զենք.
- c) դրանք ուղղված են ռազմական օբյեկտ չհանդիսացող բուսականության դեմ.
- d) դրանց կիրառումը գուցահեռաբար կհանգեցնի քաղաքացիական բնակչության շրջանում կյանքի կորուստների, քաղաքացիական անձանց վիրավորվելու և վնաս կհասցնի քաղաքացիական օբյեկտներին, կամ այդ ամենը միասին վերցրած, ինչը չափից ավելի է այն կոնկրետ և անմիջական ռազմական առավելության նկատմամբ, որը ենթադրվում է ստանալ. կամ
- e) դրանց կիրառումը կպատճառի լայնածավալ, երկարաժամկետ և լուրջ վնաս շրջակա միջավայրին [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Ծավալվող գնդակներ

Կանոն 77. Արգելվում է օգտագործել այնպիսի գնդակներ, որոնք դյուրությամբ ծավալվում կամ ճզմվում են մարդկային մարմնում [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Պայթող գնդակներ

Կանոն 78. Արգելվում է մարդկանց դեմ կիրառել այնպիսի գնդակներ, որոնք պայթում են մարդկային մարմնում [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Զենք, որի հիմնական գործողությունը չհայրմաբերվող բեկորներով վնասներ հասցնելն է

Կանոն 79. Արգելվում է օգտագործել զենք, որի հիմնական գործողությունը չհայտնաբերվող բեկորներով վնասներ հասցնելն է [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Ծուղակ - ականներ

Կանոն 80. Արգելվում է օգտագործել ծուղակ-ականներ, որոնք ինչ-որ կերպ կապվում են կամ ասոցիացվում են միջազգային մարդասիրական իրա-

վունքով նախատեսված հատուկ պաշտպանության իրավունք ունեցող օբյեկտների կամ անձանց հետ կամ այնպիսի օբյեկտների հետ, որոնք կարող են գրավել քաղաքացիական անձանց ուշադրությունը [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Վեր*երնյա ականներ

Կանոն 81. Վերգետնյա ականներ օգտագործելիս պետք է առանձնահատուկ զգուշություն ցուցաբերել՝ դրանց ոչ ընտրովի գործողության հետևանքները նվազագույնի հասցնելու համար [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 82. Վերգետնյա ականներ օգտագործող ընդհարման կողմը պետք է, հնարավորինս, գրանցի դրանց տեղակայման վայրերը [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 83. Ռ-ազմական ակտիվ գործողությունների ավարտից հետո վերգետնյա ականներ կիրառած ընդհարման կողմը պետք է հեռացնի դրանք կամ որևէ այլ կերպ անվնաս դարձնի քաղաքացիական անձանց համար, կամ աջակցի դրանց հեռացմանը [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Հրկիզող զենքեր

Կանոն 84. Եթե հրկիզող զենք է կիրառվում, ապա պետք է ցուցաբերվի առանձնահատուկ զգուշություն՝ խուսափելու համար քաղաքացիական բնակչության շրջանում կյանքի պատահական կորուստներից, քաղաքացիական անձանց պատահական վիրավորվելուց, քաղաքացիական օբյեկտների պատահական վնասելուց կամ, համեմայն դեպս, դրանք հասցնել նվազագույնի [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 85. Մարդկանց դեմ հրկիզող զենքի կիրառումն արգելված է, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է կիրառել նվազ վնասաբեր զենք՝ անձին շարքից հանելու համար [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կուրացնող լազերային զենքեր

Կանոն 86. Արգելվում է կիրառել լազերային զենք, որը հատկապես նախատեսված է օգտագործել ռազմական գործողություններում՝ բացառապես կամ այդ թվում նրա համար, որպեսզի օպտիկական սարքեր չօգտագործող մարդու տեսողական օրգաններին պատճառվի մնայուն կուրություն [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Քաղաքացիական անձանց և շարքից դուրս եկած անձանց կատմամբ վերաբերմունքը

Հիմնական երաշխիքներ

Կանոն 87. Քաղաքացիական անձանց և շարքից դուրս եկած անձանց հետ անհրաժեշտ է վարվել մարդասիրաբար [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 88. Միջազգային մարդասիրական իրավունքը կիրառելիս արգելվում է իրականացնել անբարենպաստ տարբերակում՝ հիմնված ռասայի, մշակի գույնի, սեռի, լեզվի, կրոնի կամ դավանանքի, քաղաքական կամ այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային վիճակի, ծնունդի կամ այլ կարգավիճակի և կամ որևէ այլ նման չափանիշների վրա [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 89. Սպանությունն արգելված է [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 90. Արգելվում են կտտանքները, դաժան կամ անմարդկային վերաբերմունքը և մարդկային արժնապատվության նկատմամբ ոտնձգությունները, մասնավորապես՝ վիրավորական և նվաստացնող վերաբերմունքը [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 91. Մարմնական պատիժներն արգելված են [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 92. Արգելվում է պատճառել հաշմոթյուն, իչպես նաև իրականացնել բժշկական կամ գիտական գիտափորձեր կամ որևէ այլ բժշկական միջամտություններ, որոնք չեն բխում համապատասխան անձի առողջական վիճակից և չեն համապատասխանում համընդհանուր բժշկական նորմերին [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 93. Բռնաբարությունը և սեռական բռնության այլ ձևերն արգելված են [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 94. Արգելվում են ստրկությունը և ստրկավաճառությունը՝ ցանկացած ձևով [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 95. Արգելված է չհատույվող կամ նվաստացուցիչ հարկադիր աշխատանքը [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 96. Պատանդ վերցնելն արգելվում է [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 97. Արգելվում է մարդկանց որպես կենդանի վահան օգտագործելը [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 98. Բռնի անհայտացումներն արգելված են [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 99. Արգելվում է կամայական ազատագրկումը [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 100. Ոչ ոք չի կարող դատվել կամ դատապարտվել այլ կերպ, քան բոլոր հիմնական դատական երաշխիքները տրամադրող արդար դատաքննության արդյունքում [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 101. Ոչ ոք չի կարող մեղադրվել քրեական հանցագործություն կատարելու համար կամ դատապարտվել ցանկացած գործողության կամ բացթողման հիման վրա, որոնք տվյալ գործողության կատարման կամ բացթողման ժամանակ գործող ազգային օրենսդրության կամ միջազգային իրավունքի նորմերին համապատասխան քրեական հանցագործություն չեն համարվել. հավասարապես չի կարող ավելի խիստ պատիժ կիրառվել, քան այն, որը կիրառելի կլիներ այն ժամանակ, երբ կատարվել է տվյալ քրեական հանցագործությունը [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 102. Ոչ ոք չի կարող դատապարտվել հանցագործության համար այլ կերպ, քան անձնական (անհատական) քրեական պատասխանատվության հիման վրա [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 103. Կոլեկտիվ պատիժներն արգելվում են [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 104. Քաղաքացիական անձանց և շարքից դուրս եկած անձանց համոզմունքներն ու կրոնական ծեսերը պետք է հարգանք վայելեն [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 105. Ընտանեկան կյանքը պետք է հարգվի որքանով որ դա հնարավոր է [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կոմբարանությունները և ռազմագերու կարգավիճակը

Կանոն 106. Կոմբատանտները պարտավոր են իրենց տարբերել քաղաքացիական բնակչությունից, երբ մասնակցում են հարձակմանը կամ հարձակման նախապատրաստություն հանդիսացող ռազմական գործողությանը: Եթե նրանք չեն կատարում այդ պահանջը, ապա իրավունք չունեն ստանալու ռազմագերու կարգավիճակ [ՄՁԸ]:

Կանոն 107. Լրտեսական գործունեությամբ զբաղվելու ժամանակ գերված կոմբատանտները ռազմագերու կարգավիճակի իրավունք չունեն: Նրանք չեն կարող դատապարտվել կամ պատժի ենթարկվել առանց նախնական դատաքննության [ՄՁԸ]:

Կանոն 108. Վարձկանները, ինչպես սահմանված է I Լրացույցիչ արձանագրությունում, կոմբատանտի կամ ռազմագերու կարգավիճակի իրավունք չունեն: Նրանց չի կարելի դատապարտել կամ նրանց նկատմամբ պատիժ կիրառել առանց նախնական դատաքննության [ՄՁԸ]:

Վիրավորները, հիվանդները և նավաբեկյալները

Կանոն 109. Մշտապես, երբ թույլ են տալիս հանգամանքները, և հատկապես յուրաքանչյուր մարտից հետո, ընդհարման մեջ գտնվող կողմերից յուրաքանչյուրը պետք է ձեռնարկի բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի գտնի, հավաքի և տարհանի վիրավորներին, հիվանդներին և նավաբեկյալներին՝ առանց անբարենպաստ բնույթի որևէ տարբերակման [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 110. Վիրավորները, հիվանդները և նավաբեկյալները պետք է ստանան իրենց վիճակով պայմանավորված բուժօգնություն և խնամք՝ առավելագույն չափով և ամենասեղմ ժամկետներում: Նրանց միջև որևէ տարբերակում որևէ նկատառումներով, բացի բժշկական տվյալներից, չպետք է դրվի [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 111. Ընդհարման յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի գերծ պահի վիրավորներին, հիվանդներին և նավաբեկյալներին վատ վերաբերմունքից և անձնական ունեցվածքի կողոպուտից [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Մահացածները

Կանոն 112. Ամեն անգամ, երբ թույլ են տալիս հանգամանքները և, հատկապես մարտից հետո, ընդհարման կողմերը պետք է անհապաղ ձեռնար-

կեն բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի գտնեն և դուրս բերեն մահացածներին՝ առանց անբարենպաստ բնույթի որևէ տարբերակման [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 113. Ընդհարման յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի խոչընդոտի մահացածների կողոպուտը: Արգելված է մահացածների մարմինների անարգումը [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 114. Ընդհարման կողմերը պետք է ձգտեն ամեն կերպ աջակցել մահացածների աճյունների վերադարձին՝ այն կողմի հարցման համաձայն, որին նրանք պատկանել են, կամ նրանց մերձավորների հարցումով: Ընդհարման կողմերը պետք է վերադարձնեն նաև մահացածների անձնական իրերը [ՄՁԸ]:

Կանոն 115. Մահացածները պետք է արժանավայել կերպով հուղարկավորվեն, նրանց շիրիմները՝ հարգվեն և պատշաճորեն խնամվեն [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 116. Որպեսզի հնարավոր լինի իրականացնել մահացածների նույնականացումը, ընդհարման յուրաքանչյուր կողմ պետք է գրանցի մինչև հուղարկավորությունն առկա ամբողջ տեղեկատվությունը և նշի շիրիմների գտնվելու տեղը [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Անհայտ կորած անձինք

Կանոն 117. Ընդհարման յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի գործնականորեն բոլոր հնարավոր միջոցները՝ պարզելու համար զինված ընդհարման արդյունքում անհայտ կորած անձանց ճակատագիրը և այդ անձանց ընտանիքների անդամներին տրամադրի իրեն հայտնի ցանկացած տեղեկատվություն նրանց ճակատագրի վերաբերյալ [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Ազատագրված անձինք

Կանոն 118. Ազատագրված անձանց պետք է տրամադրվի կացարան, ինչպես նաև բավարար քանակությամբ պարեն և ջուր, համապատասխան հագուստ և բուժօգնություն [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 119. Ազատագրված կանայք, պետք է պահվեն տղամարդկանց համար նախատեսված կացարաններից առանձնացված շինություններում, բացառությամբ այն դեպքերի, երբ ընտանիքները պահվում են միասին: Կանայք պետք է պահվեն կանանց անմիջական հսկողությամբ [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 120. Ազատագրված երեխաները պետք է պահվեն մեծահասակների համար նախատեսված կացարաններից առանձնացված շինություններում, բացառությամբ այն դեպքերից, երբ ընտանիքները պահվում են միասին [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 121. Ազատագրված անձինք պետք է պահվեն ռազմական գործողությունների գոտուց բավարար հեռավորության վրա գտնվող շինություններում, որոնք ունեն առողջության պահպանման և հիգիենայի երաշխավորման պայմաններ [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 122. Արգելված է ազատագրված անձանցից խլել նրանց անձնական իրերը [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 123. Ազատագրված անձանց անձնական տվյալները պետք է գրանցվեն [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 124.

A. Միջազգային զինված ընդհարումների ժամանակ ԿԽՄԿ-ին պետք է հնարավորություն տրվի կանոնավոր կերպով այցելել ազատագրված անձանց՝ նրանց պահման պայմաններն ստուգելու և այդ անձանց և նրանց ընտանիքների միջև կապը վերականգնելու համար [ՄՁԸ]:

B. Ոչ միջազգային զինված ընդհարումների ժամանակ ԿԽՄԿ-ն կարող է ընդհարման կողմերին առաջարկել իր ծառայությունները, որպեսզի իրականացնի ազատագրված բոլոր անձանց այցելությունները, որոնք ազատագրվել են ընդհարման հետ կապված պատճառներով՝ ստուգելու համար նրանց պահելու պայմանները և վերականգնելու այդ անձանց և նրանց ընտանիքների կապը [ՄՁԸ]:

Կանոն 125. Ազատագրված անձանց պետք է թույլատրվի նամակագրական կապ ունենալ իրենց ընտանիքների հետ՝ պահպանելով նամակագրության հաճախականության և իշխանությունների կողմից գրաքննության անհրաժեշտության հետ կապված խելամիտ պայմանները [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 126. Քաղաքացիական ներկայված անձանց և ոչ միջազգային բնույթի զինված ընդհարման առնչությամբ ազատագրված անձանց պետք է թույլատրվեն, որքան որ դա գործնականորեն հնարավոր է, տեսակցություններ՝ հատկապես մոտ ազգականների հետ [ՄՁԸ]:

Կանոն 127. Ազատագրված անձանց անձնական համոզմունքները և կրոնական պրակտիկան պետք է հարգվեն [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 128.

A. Ռազմագերիները պետք է անհապաղ ազատ արձակվեն և հայրենադարձվեն ռազմական ակտիվ գործողությունների ավարտից հետո [ՄՁԸ]:

B. Քաղաքացիական ներկայված անձինք պետք է անհապաղ ազատ արձակվեն անմիջապես այն բանից հետո, երբ կդադարի նրանց ներկայումս պայմանավորող պատճառների գործողությունը, բայց ամենաուշը՝ ռազմական ակտիվ գործողությունների ավարտից հետո հնարավորինս ամենասեղմ ժամկետներում [ՄՁԸ]:

C. Ոչ միջազգային բնույթի զինված ընդհարման առնչությամբ ազատագրված անձինք պետք է անհապաղ ազատ արձակվեն անմիջապես այն բանից հետո, երբ կդադարի ազատագրվումը պայմանավորող պատճառների գործողությունը [ՄՁԸ]:

Վերոնշյալ անձանց ազատագրվումը կարող է շարունակվել, եթե նրանց նկատմամբ իրականացվում են քրեադատավարական գործողություններ կամ

նրանք կրում են իրենց պատիժն օրինականորեն կայացված դատավճռին համապատասխան:

Տարագրություն և տարագրված անձինք

Կանոն 129.

A. Միջազգային զինված ընդհարման կողմերը չեն կարող ամբողջությամբ կամ մասնակիորեն տեղահանել կամ բռնի տարագրել օկուպացված տարածքի բնակչությանը, եթե դա պայմանավորված չէ համապատասխան քաղաքացիական անձանց անվտանգության ապահովմամբ կամ ռազմական բնույթի հրատապ պատճառներով [ՄՁԸ]:

B. Ոչ միջազգային զինված ընդհարման կողմերը չեն կարող հրաման արձակել ընդհարմանն առնչվող պատճառներով ամբողջ քաղաքացիական բնակչությանը կամ նրա մի մասի տարագրման մասին, եթե դա պայմանավորված չէ համապատասխան քաղաքացիական անձանց անվտանգության ապահովմամբ կամ ռազմական բնույթի հրատապ պատճառներով [ՈՄՁԸ]:

Կանոն 130. Պետությունները չեն կարող տեղահանել և վերաբնակեցնել իրենց քաղաքացիական բնակչության մի մասին այն տարածքում, որը նրանք օկուպացրել են [ՄՁԸ]:

Կանոն 131. Տարագրման դեպքում պետք է ձեռնարկվեն բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի համապատասխան քաղաքացիական անձանց ընդունելիս ապահովվեն բնակեցման, հիգիենայի, առողջության պահպանման, անվտանգության և սննդի բավարար պայմաններ, և որպեսզի միևույն ընտանիքի անդամները չբաժանվեն միմյանցից [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 132. Տարագրված անձինք իրավունք ունեն վերադառնալու իրենց տները կամ մշտական բնակության վայրերն անվտանգության պայմաններում և անմիջապես այն բանից հետո, երբ դադարում է նրանց տարագրությունը պայմանավորող պատճառների գործողությունը [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 133. Տարագրված անձանց գույքային իրավունքները պետք է հարգվեն [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Հարուկ պաշտպանության ներքո գտնվող այլ անձինք

Կանոն 134. Չինված ընդհարմամբ շոշափված կանանց հատուկ պահանջմունքները պաշտպանության, բուժառայությունների և օգնության առնչությամբ պետք է հաշվի առնվեն [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 135. Չինված ընդհարմամբ շոշափված երեխաները հատուկ հարգանքի և պաշտպանության իրավունք ունեն [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 136. Երեխաները չպետք է հավաքագրվեն զինված ուժերում կամ զինված խմբավորումներում [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 137. Չի կարելի թույլատրել, որ երեխաները մասնակցեն ռազմական գործողություններին [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 138. Ռազմական ընդհարմամբ շոշափված զառամյալ, անօգնական անձինք և հաշմանդամները հատուկ հարգանքի և պաշտպանության իրավունք ունեն [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Իմպլեմենտացիա

Միջազգային մարդասիրական իրավունքի պահպանումը

Կանոն 139. Ջինված ընդհարման յուրաքանչյուր կողմ իր ռազմական ուժերի, ինչպես նաև իր կարգադրություններով կամ իր դեկավարությամբ և վերահսկողությամբ փաստացի գործող անձանց կամ խմբերի միջոցով պետք է պահպանի և ապահովի միջազգային մարդասիրական իրավունքի կիրառումը [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 140. Միջազգային մարդասիրական իրավունքի պահպանման և ապահովման պարտավորությունը կախված չէ փոխադարձության սկզբունքից [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 141. Երբ անհրաժեշտ է, յուրաքանչյուր պետություն պետք է ապահովի իրավախորհրդականների առկայությունը, որոնք կկարողանան համապատասխան մակարդակով խորհուրդներ տալ հրամանատարներին միջազգային մարդասիրական իրավունքի կիրառման հարցով [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 142. Պետությունները և ընդհարման կողմերը պետք է ապահովեն իրենց զինված ուժերի պատրաստվածությունը միջազգային մարդասիրական իրավունքի հարցում [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 143. Պետությունները պետք է խրախուսեն միջազգային մարդասիրական իրավունքի ուսուցումը քաղաքացիական բնակչությանը [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Միջազգային մարդասիրական իրավունքի
պահպանման ապահովումը

Կանոն 144. Պետությունները չեն կարող խրախուսել ռազմական ընդհարման ընթացքում դրա մասնակիցների կողմից միջազգային մարդասիրական իրավունքի խախտումները: Հնարավորության սահմաններում նրանք պետք է օգտագործեն իրենց ազդեցությունը, որպեսզի կասեցնեն միջազգային մարդասիրական իրավունքի խախտումները [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 145. Պատերազմողների ռեպրեսալիաները, եթե դրանք արգելված չեն միջազգային իրավունքով, պետք է բավարարեն ամենախիստ պահանջները [ՄՁԸ]:

Կանոն 146. Պատերազմող կողմերին արգելվում է ռեպրեսալիաներ կիրառել Ժնևի կոնվենցիաների պաշտպանության ներքո գտնվող անձանց նկատմամբ [ՄՁԸ]:

Կանոն 147. Արգելվում են ռեպրեսալիաները, որոնք ուղղված են Ժնևի կոնվենցիաների և Մշակութային արժեքների պաշտպանության մասին Հաս-գայի կոնվենցիայի պաշտպանության ներքո գտնվող օբյեկտների դեմ [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 148. Ոչ միջազգային բնույթի զինված ընդհարման կողմերն իրա-վունք չունեն դիմել ռեպրեսալիաների: Արգելված են նաև այլ հակամիջոցները՝ ուղղված այն անձանց դեմ, որոնք չեն մասնակցում կամ դադարեցրել են իրենց անմիջական մասնակցությունը ռազմական գործողություններին [ՈՄՁԸ]:

Պարասխանափութությունը և փոխհարուցումը

Կանոն 149. Պետությունը պատասխանատու է միջազգային մարդա-սիրական իրավունքի՝ իրեն վերագրվող խախտումների համար, ներառյալ՝

- a) իր մարմինների, այդ թվում նաև զինված ուժերի կողմից կատար-ված խախտումները.
- b) խախտումներ՝ կատարված անձանց կամ կազմավորումների կող-մից, որոնց պետությունը լիազորել է իրականացնել պետական իշ-խանության գործառույթների տարրեր.
- c) խախտումներ՝ կատարված անձանց կամ խմբերի կողմից, որոնք փաստացի գործում են պետության ցույումներով կամ նրա ղեկավա-րությամբ և կամ վերահսկողությամբ.
- d) մասնավոր անձանց կամ խմբերի կողմից կատարված խախտումնե-րը, որոնց մասին պետությունն իրազեկված է և ընդունում է որպես իր սեփական գործողություններ [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Անձնական պարասխանափութություն

Կանոն 151. Առանձին անձինք քրեական պատասխանատվություն են կրում իրենց կատարած պատերազմական հանցագործությունների համար [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 152. Հրամանատարները և այլ պետերը քրեական պատասխա-նատվություն են կրում իրենց հրամանով կատարված պատերազմական հան-ցագործությունների համար [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 153. Հրամանատարները և այլ պետերը քրեական պատասխա-նատվություն են կրում իրենց ենթակաների կողմից կատարված պատերազմա-կան հանցագործությունների համար, եթե իմացել կամ կարող էին իմանալ, որ այդ ենթակաները մտադիր են կատարել կամ կատարում են նման հանցագոր-ծություններ, և իրենց լիազորությունների սահմաններում չեն ձեռնարկել բոլոր անհրաժեշտ և խելամիտ միջոցներն այդ հանցագործությունները կանխելու, կամ, եթե դրանք արդեն կատարվել են՝ կատարողներին պատժելու համար [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 154. Յուրաքանչյուր կոմբատանտ պարտավոր է չենթարկվել ակնհայտ ապօրինի հրամանին [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 155. Պետի հրամանին ենթարկվելը ենթակային չի ազատում քրեական պատասխանատվությունից, եթե ենթական իմացել է, որ այն գործողությունը, որն իրեն հրամայվել է կատարել, ապօրինի է, կամ պետք է իմանար այդ մասին՝ պայմանավորված այդ գործողության ակնհայտ ապօրինի բնույթով [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Պարերազմական հանցագործություններ

Կանոն 156. Միջազգային մարդասիրական իրավունքի լուրջ խախտումները պատերազմական հանցագործություններ են [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 157. Պետություններն իրավունք ունեն իրենց ազգային դատարաններին օժտել ունիվերսալ իրավագործությամբ պատերազմական հանցագործությունների նկատմամբ [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 158. Պետությունները պետք է հետաքննեն այն պատերազմական հանցագործությունները, որոնք, ըստ պնդումների, կատարել են նրանց քաղաքացիները կամ զինված ուժերը կամ կատարվել են իրենց տարածքում և, անհրաժեշտության դեպքում, իրականացնեն կասկածյալների դատական հետապնդում: Նրանք պետք է հետաքննեն նաև այլ պատերազմական հանցագործություններ, որոնց նկատմամբ օժտված են իրավագործությամբ, և, անհրաժեշտության դեպքում, իրականացնեն կասկածյալների դատական հետապնդում [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 159. Ռ-ազմական գործողությունների ավարտից հետո իշխանության մարմինները պետք է ձգտեն ոչ միջազգային բնույթի զինված ընդհարման մասնակցած անձանց, կամ զինված ընդհարման հետ կապված պատճառներով ազատագրված անձանց նկատմամբ կիրառել հնարավորինս լայն համաճեղծություն, քայառությամբ այն անձանց, որոնք կասկածվում կամ մեղադրվում են և կամ արդեն իսկ դատապարտված են պատերազմական հանցագործություններ կատարելու համար [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 160. Վաղեմության ժամկետը չի կարող կիրառվել պատերազմական հանցագործությունների նկատմամբ [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Կանոն 161. Պետությունները պետք է բոլոր ջանքերը գործադրեն, որպեսզի որքան հնարավոր է համագործակցեն միմյանց հետ պատերազմական հանցագործությունների հետաքննումը և կասկածյալների դատական հետապնդումն իրականացնելու նպատակով [ՄՁԸ/ՈՄՁԸ]:

Ժան-Մարի Հենկերյ

**Շեղանկություն սովորության միջազգային
մարդասիրական իրավունքի վերաբերյալ.
ներդրում իրավունքի նորմերը հասկանալու
և զինված ընդհարման ժամանակ
պահպանելու համար**

Թարգամանությունը՝ անգլերենից

Գիրքը հրատարակվել է
«Հույս և սեր» հրատարակչատանը

